

Տուպայի «Արապիա» պատկերասփիռի կայանը երեկ սփռեց Սատտամ Հիւսէյնի ձայնով երկ մը, որուն մէջ իրաքցի նախկին ղեկավարը Ռամատանի առիթով պատգամ մը կ'ուղղէ իրաքցիներուն, ըսելով, թէ Իրաքի իշխող խորհուրդը ամերիկեան դրածոյ է եւ ապօրինի: Ան կոչ կ'ուղղէ նաեւ շարունակել բռնազրաւող ուժերուն դէմ «արապան պատերազմը»:

● ՀԻՒՄԻՍՏՅՆ ԻՐԱՔԻ ԲԵՐՔՈՒՄԻ շրջանի փոխ կառավարիչը՝ Իսմայիլ Ահմէտ Ռամատանի պատիւով երեկ փրկուած է մահափորձէ, երբ անծանօթ փնտախներ կրակ բացած են անոր ինքնաշարժին վրայ: Հատիտի եւ վարորդը վիրաւորուած են:

● ՉՈՐՍ ՎՈՐԱՌՈՐ պայթուումներ լսուած են երեկ գիշեր Պաղտատի մէջ, սակայն այս գծով ոչ մէկ լուր տրուած չէ: Կարծիքով մարտնչական ուժերու հաղորդակցութեան միջոցով:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ՎԱՂԸ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՄԵԿՆԻ ԴԱՄԱՍԿՈՍ

Նախագահ Վաղը Լահուտ վաղը՝ երեքշաբթի, պաշտօնական այցելութեամբ մը պիտի մեկնի Դամասկոս, ուր հանդիպում մը պիտի ունենայ Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի հետ:

Նշենք, որ նախագահ Լահուտ նախապէս մէկ անգամ այցելած էր Սուրիա եւ հանդիպում ունեցած՝ նախկին նախագահ Հաֆէզ Ասատի հետ:

ՍՈՒՐԻՈՅ ԲԱՐԵԿԱՐԳՉԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻ 33Դ ԵՍԱՐԵԴԱՐՁԸ ՊԵՏՐՈՒԹԻ ՄԷՋ ՆՇՈՒԵՑԱԻ ՄԵԾ ՇՈՒԵՐՈՎ

Երեկ առաւօտեան ժամը 11:00ին, ԵՆԻՆԵՍՔՈՒ սրահին մէջ տեղի ունեցաւ քաղաքական հանդիսութիւն մը, նուերուած՝ Սուրիոյ Բարեկարգչական Շարժումի 33րդ տարեգարծին:

Ներկայ գտնուեցան հանրապետութեան նախագահ Վաղը Լահուտի ներկայացուցիչ նախարար Մահմուտ Համմուտ, խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի ներկայացուցիչ Երեսփոխան Նասէր Քանտիլ, վարչապետ Ռաֆիք Հարիրիի ներկայացուցիչ նախարար Ասատ Տիպալ, նախարարներ, երեսփոխաններ, պետական եւ կուսակցական անձնակազմի անդամներ, որոնց շարքին՝ Լ. Յ. Դ. Լիբանանի կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Յովիկ Միթիթարեան:

Հանդիսութեան խօսք առնողներուն շարքին էին Հըզ-պալլայի փոխ ընդհանուր քարտուղար շէյխ Նայիմ Քասսամ, Լիբանանեան կուսակցութիւններու Համախմբուածին անունով՝ վարչական բարեկարգումներու նախարար Քարիմ Բազրատունի, Պասս կուսակցութեան ղեկավար, պետական նախարար Ասէմ Քանսո, ինչպէս նաեւ պաղեստինեան կազմակերպութիւններու անունով՝ Համասի քաղաքական գրասենեակի անդամ Խալէտ Մաշաալ, որ այս առիթով ժամանած էր Դամասկոս:

Շէյխ Քասսամ իր խօսքին մէջ ըսաւ, որ լիբանանեան սահմանին վրայ իսրայէլեան ուժերու կատարած ռազմական ցուցադրութիւնները անհեթեթ են եւ կը ծառայեն միայն քարոզչական աղմուկ ստեղծելու: Ան Հարց տուաւ Իսրայէլի պաշտպանութեան նախարար Շաուլ Մոֆազի, թէ որովհետեւ Համաս է, որ Իսրայէլ բոլոր այդ ցուցադրութիւնները կը կատարէ:

Ան նաեւ Հարց տուաւ, թէ ինչո՞ւ Հըզպալլայի ղեմ գրեթէ օրական դրուածմամբ մեղադրանքներու ալիքը կ'աւելնայ:

Շէյխ Քասսամ աւելցոյց, որ եթէ իսրայէլացիները զինուորական այդ ցուցադրութիւնները կը նկատեն պատրաստութիւններ, ազատ են եւ իրենց ուզած ձեւով թող շարժին, «սակայն մէկ բան կ'ուզենք ըսել անոնց, որ որեւէ ատեն, որ կը փորձեն հարուածել Լիբանանը, Հըզպալլա նոյն վայրկեանին իսկ պատրաստ է հակադարձելու»:

Ասէմ Քանսո իր խօսքին մէջ գրուածոց Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի արժանիքները եւ ըսաւ, որ եւրոպական թէ՛ ամերիկեան պատուիրակութիւնները, որոնք «հրաւերներ» կը բերեն Սուրիոյ փոփոխութեան ենթակալելու իրենց կեցուածքն ու քաղաքականութիւնը, չարաչար ձախողած են եւ կը ձախողին:

Խալէտ Մաշաալ յայտնեց, թէ պաղեստինցիները եւս կը մերժեն պաղեստինցի գաղթականներու բնակեցումը եւ ամէն գնով կը պահանջեն տունդարձի իրաւունքը:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ ԿԸ ՓՈԽԱՆՑԻ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԲՆԱԿԵՑՄԱՆ ԴԵՄ ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԵՑՈՒԱԾՔԸ

Բրիտանական հրաւերով երէկ Լոնտոն մեկնեցաւ լիբանանեան խորհրդարանական պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմեն երեսփոխաններ Եսաին Փապէր, Ահմէտ Հպուս, Նազմ Խուրի, Մոհամէտ Սաֆաթի եւ արտաքին հարցերու խորհրդարանական յանձնախումբի ընդհանուր քարտուղար Պիլալ Շարարա:

Պատուիրակութիւնը խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիին նամակ մը պիտի փոխանցէ բրիտանական իշխանութիւններուն:

Նամակը կ'անդրադառնայ երկրպագական այն որոշումին, որուն հիմամբ պաղեստինցի գաղթականներ պիտի բնակեցուին իրենց գտնուած երկիրներուն մէջ:

Նամակին մէջ յիշուած է Լիբանանի մերժողական կեցուածքը վերոնշեալ որոշումին, ինչպէս նաեւ պաղեստինցի գաղթականներու տունդարձի իրաւունքի գործադրութեան անհրաժեշտութիւնը:

ՊՈԼՍՈՅ ՄԷՋ ԵՐԿՈՒՄԻ ՍԻՆԱԿՈՎՆԵՐ ԹԻՐԱՆ ԴԱՐՁԱՆ ԽԱՓԱՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ, ՈՐՈՆԵ ՊԱՏՃԱՌԵՑԻՆ ԱՌՆՈՒԱՋՆ 23 ԶՈՐ ԵՒ ՇՈՒՐՋ 300 ՎԻՐԱՒՈՐ



Պոլսոյ մէջ առնուազն 23 գուհ եւ շուրջ 300 վիրաւոր արձանագրուեցան Շարաթ օր՝ երկու սինակոկներու առջեւ տեղի ունեցած ինքնաշարժներու պայթումին հետեւեալով: Խափանարարական այս գործողութիւնները, որոնց ետին, ըստ թուրք ղեկավարներու, «միջազգային ահաբեկիչներ» կը կանգնին, սաստիկ ցնցած են երկրին հրեայ համայնքը եւ աշխարհի տարածքին դատապարտումի մեծ ալիք մը յառաջացուցած:

Ըստ «Հիւրիլիթ» թերթին, թրքական ոստիկանութիւնը ձերբակալած է 3 անձեր, որոնց ինքնութիւնը չէ հրապարակուած, ո՛չ ալ տեղեկութիւն հաղորդած է, թէ անոնք ի՞նչ կազմակերպութեան կը պատկանին:

Թէ եւ անծանօթ մը «Անատոլու» լրատու գործակալութեան հետ հեռաձայնային հաղորդակցութեան մը մէջ ըսած է, թէ թրքական արմատական խմբակ մը՝ «Մեծն Արեւելքի Ներխուժողներու իսլամական ծախս», գործողութեան մէջ զործողութիւնը, սակայն թուրք պաշտօնատարներու կարծիքով, անիկա «միջազգային ահաբեկիչներու», հաւանաբար՝ «Քալիփա» կնիքը կը կրէ:

«Յատակ է, թէ ասիական ահաբեկչական բնոյթ ունեցող ղեկավարները միջազգային կապերով», ըսած է արտաքին գործոց նախարար Ապտիլլա Կիլ:

ԸՍՏ «ԲՈՒՏՍ ԱՐԱՊԻ» ԹԵՐԹԻՆ
«ՔԱՅԻՏԱ» ԿԸ ՍՏԱՆՁՆԷ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ

Ըստ արաբական «Քուտս Արապի» թերթին, «Քալիփա» ստանձնած է Պոլսոյ մէջ երկու սինակոկներուն պայթումներուն, ինչպէս նաեւ Իրաքի մէջ իտալական կեդրոնի դէմ պատասխանատուութիւնը:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԵՐԿՈՒՄԻ ՈՒՂՂԱԹԻՈՆԵՐ ԶԱՆՉԱՆՈՒԵՅԱՆ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԻՐԱՔԻ ՄԷՋ. 17 ԶՈՂ

Ամերիկացի 17 պիւլուրներ սպանուեցան եւ ինքնուրոյն ծանրորէյն վիրաւորուեցան, երբ «Պլէք-հոք» տիպի երկու ուղղաթիւներ իրարու բախեցան, երբ հրթիռէ մը խուսափելու փորձ կատարեց ուղղաթիւներէն մէկը: Ամերիկեան պիւլուրական իրամասնատարութիւնը հաստատեց 17 պիւլուրներու սպանութիւնը:

Իրաքցի ոստիկան սպայ մը յայտնեց, որ ուղղաթիւ մը կը փորձէր պաշտպանել ցամաքի վրայ յարձակումի ենթակուած խումբ մը ամերիկացի պիւլուրներ, երբ հրթիռ մը արձակուեցաւ ուղղաթիւին դէմ: Հրթիռն է փախուստ տալու ճամբուն վրայ, ուղղաթիւը բախեցաւ երկրորդ ուղղաթիւի մը եւ երկուքը շախախտուեցան:

Իրաքցի սպային տուած բացատրութեան մասին՝ մեկնաբանութիւն չկատարեց ամերիկեան ուժերուն հրամանատարութիւնը: Բանքեր մը ըսաւ, որ միջազգային մասին հետաքննութիւն բացուած է, սակայն տակաւին մասնաւորապէս ինքնուրոյն խումբի մասին չկան որոշումներ: Ուղղաթիւները շախախտուած էին Մուսուլի մօտ: Յամաքի վրայ յարձակումի ենթակուած պիւլուրները տուած են երեք վիրաւորներ: Մինչ այդ, ամերիկեան ուժեր կը շարունակեն ձերբակալութիւնները կատարելու իրաքցիներու: Անցեալ Չորեք-

շաբթի օրուրն է ի վեր, Պաղտատի հիւսիսը՝ Սուպար նահանգին մէջ ձերբակալուած են 134 հոգի: Իսկ Բերքուրի մօտ, ամերիկեան ուժեր պատերազմական գործողութիւններու աւարտին ի վեր (1 Մայիս), առաջին անգամ ըլլալով արբանեակով առաջնորդուող հրթիռ մը արձակեցին նախկին վարչակարգին պատկանող մարտի բանակատեղիի մը վրայ:

(ԱՅՓ)

ՎՐԱՍՏԱՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԾԱԿԱՍԸ ՎԵՐՋԻՆ ԱՌԻԹ ԿՈՒ ՏԱՅ ՇԵՄՐՏՆԱԾԻ

Վրաստանի ընդդիմութեան ղեկավարները երէկ որոշեցին վերջին առիթ մը տալ նախագահ էտուարտ Շեւարտնաձէի՝ հրաժարելու՝ յստակ դարձնելով, որ այլապէս կրնան դիմել տարբեր միջոցներու, եթէ խաղաղ փորձերը ձախողին: «Անգամ մը եւս պէտք է միացնենք մեր ուժերը ըսելու համար Շեւարտնաձէին, որ այլեւս չենք հանդուրժել իր իշխանութիւնը», յայտարարեց ընդդիմադիր ղեկավար Միխայիլ Սահակաշվիլի, որուն գլխաւորած կուսակցութիւնը ընդդիմութեան առաջատարներէն է: Այսուհանդերձ, թիֆլիսի մէջ ընդդիմադիրներու ցոյց մը, որ պիտի կայանար այսօր, ջնջուած է: Ընդդիմադիրները յայտնեցին, որ ցոյցերը պիտի շարունակուին խորհրդարանական ընտրութիւններու վերջնական արդիւնքներու հրապարակումէն ետք: Արդիւնքներու հրապարակման ժամկէտը յառաջիկայ Հինգշաբթի օրն է:

Սահակաշվիլի յայտնեց, թէ իշխանութիւնները կը պատրաստուին գործ տարածելու մայրաքաղաք Թիֆլիս, բան մը, որ հերքուեցաւ Շեւարտնաձէի կառավարութեան կողմէ:

Ընդդիմադիր այլ ղեկավար մը՝ Զուրապ Ժաւնիա իր կարգին յայտնեց, թէ ընդդիմութեան յառաջիկայ քայլերը կ'ախելաւ են ընդդիմադիր շարքերուն միացող վրացիներուն թիւէն: «Որքան ընդդիմադիր ցոյցերու թիւը, այնքան կ'աւելնայ կառավարութեան խաղաղ միջոցներով ձերբազատելու հնարաւորութիւնը», ըսաւ ան:

Բողոքի ընդհանուր ալիք մը ծայր առած էր Նոյեմբեր 2ի խորհրդարանական ընտրութիւններէն ետք, երբ իշխանութիւնները ամբաստանուած էին ընտրութիւնները կեղծելու յանցանքով:

Տեղացի թէ միջազգային ղէտեր կը գողուցանեն, որ բողոքի եւ ցոյցերու ալիքը որեւէ ատեն կրնայ վերաճելի քաղաքացիական պատերազմի:

ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏ ԱՇԽԱՐՀԸ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԷ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳԷՆ



Ասատ կ'ընդունի Վաճփայից

Սուրիոյ նախագահ Պաշար Ասատ գողուցուց Իսրայէլի որդեգրած քաղաքականութեան ծանր հետեւեալներէն ամբողջ շրջանին մէջ:

Ասատ, որ կը խօսէր Հնդկաստանի վարչապետ Աթալ Դիտարի վաճփայի այցելութեան առիթով, զիտել տուաւ, որ Միջին Արեւելքի դժուար ու բարդ կացութիւնը շուրջ մէջ կը պահէ բարդաւածման ծրագիրները: Ան աւելցոյց, որ Իսրայէլ գրաւուած կը պահէ արաբական հողերը, կը մերժէ ենթակալելու միջազգային ընտանիքին որոշումներուն, ինչպէս նաեւ յարձակումներ կը գործէ Լիբանանի եւ Սուրիոյ դէմ: Այս բոլորը վտանգաւոր հետեւանք կրնան ունենայ ո՛չ միայն շրջանին, այլեւ՝ ամբողջ աշխարհին վրայ, աւելցոյց Ասատ:

Ասատ մտահոգութիւն յայտնեց նաեւ Իրաքի կացութեան մասին, պահանջելով, որ արաբական երկիրին գրաւումը շուտով վերջ գտնէ:

Վաճփայի Դամասկոս ժամանած էր Ուրբաթ գիշեր: Երկու երկիրներէն բարձրաստիճան պաշտօնատարներ գործակցութեան շարք մը համաձայնագիրներ ստորագրեցին Շարաթ օր:

(ԱՅՓ)

Հ. Յ. Դ. ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Հ. Յ. Դ. ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՆԴԻՊՈՒՄ - ԶՈՐՅՅ
Խորհրդարանի նախկին նախագահ՝
Երեսփոխան ՀԻՄՄԵՅՆ ՀԻՄՄԵՅՆԻԻ ԻՏԵՆ
Նիւթ՝ ԹԱԷՖԻ ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐԸ
Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 19 Նոյեմբեր 2003,
Երեկոյեան ժամը 8:30ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» սրահին մէջ:

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾԱԳՈՒԼ

Լիքանանեան Համալսարանի 47 մասնաճիւղեր, իրենց 3000 դասախօսներով և հազարաւոր ուսանողներով այսօր կը սկսին մէկ շաբթուան դասադուլի մը, իբրեւ բողոք համալսարանի գործունէայ և հանգստեան կոչուած դասախօսներու պահանջներուն անտեսումին:

Լիքանանեան Համալսարանի դասախօսներու լիկայի նախագահ Շարպէլ Քֆուրի երէկ յայտնեց, որ լիկան երբեք պիտի չիրաժարի իր պահանջներէն:

Ան նկատել տուաւ, որ դասադուլը պիտի չաւարտի մինչև որ կառավարութիւնը օրինագիծ մը չմշակէ տարիներէ ի վեր անտեսուող պահանջներու գործադրութեան շուրջ:

Ան ընդգծեց, որ դասադուլը քաղաքական ոչ մէկ բնոյթ ունի և պուտ սենտիքայական է: Ան աւելցուց, որ դասադուլին կողքին նաեւ այս շաբթուան ընթացքին պիտի կազմակերպուին նստացոյցեր խորհրդարանին և կառավարութեան կեդրոնատեղիին առջև:

ԿՈՒՉՈՒԻՆ

Ոսկերչական մոմի վրայ աշխատող գործաւորուհիներ: Դիմել՝ հեռ. 01-242549:

ՄԱՀԱԶԳ

Տիկին Վազգանուշ Սահակեան
Օրիորդ Նելլի Սահակեան
Տէր Ե. տիկին Յակոբ Սահակեան և զաւակուհի
Տիկին Սոնիա Մելիտոնեան և զաւակը
Թէքնէան ընտանիք
Կարապետեան ընտանիք
և համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր և հարազատին՝

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ (ՕԾՆԵԱՎ՝ 1913ԻԾ)

մահը, որ պատահեցաւ կիրակի, 16 Նոյեմբեր 2003, առաւօտեան ժամը 6:00ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երեքշաբթի, 18 Նոյեմբեր, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ: ● Ցաւակցութիւնները կ'ընդունուին Նիւ ժոնքտէ, Հրքմէ փողոց, Սենթ Ռիթա եկեղեցւոյ սրահին մէջ, Երկուշաբթի 17 և Երեքշաբթի 18 Նոյեմբերին մինչև երեկոյեան ժամը 8:00ը, իսկ Չորեքշաբթի 19 Նոյեմբերին մինչև երեկոյեան ժամը 5:00:

ՄԱՀԱԶԳ

Տէր և տիկին Կարո Արմէնեան և զաւակները՝
Զանգու, Լորիկ և Սարիկ
Տէր և տիկին տղթ. Յարութիւն Արմէնեան
Տիար Գէորգ Արմէնեան
Տէր և տիկին Բարսեղ Արմէնեան
Տէր և տիկին Արամ և Նազան Սահակեան
և զաւակը՝ Վայր
Տէր և տիկին տղթ. Սարո Արմէնեան
և զաւակը՝ Շանթ
Տիար Սարգիս Չերքէզեան և ընտանիք
Տիկին Օրէնքին Հարէլեան
Տիկին Վարդուհի Ստանպօլեան և ընտանիք
Տիար Սարգիս Արմէնեան և ընտանիք
Տիար Օհան Արմէնեան և ընտանիք
Տէր և տիկին Ատրուշան Արմէնեան և զաւակուհի
Տէր և տիկին Ենոք և Հայկո Մուրատեան
Տէր և տիկին տղթ. Պերճ Արմէնեան և զաւակուհի
Չերքէզեան, Տատուրեան ընտանիքներ
Տիտոնեան, Շիրինեան ընտանիքներ
Էթիզեան, Շահրիբեան ընտանիքներ
Պետրոսեան, Թէրզեան ընտանիքներ
Պարսումեան, Քուրթուեան ընտանիքներ
Սահակեան, Ստեփանեան ընտանիքներ
և համայն ազգականներ կը գուժեն իրենց հօր, եղբոր, մեծ հօր, գարմիկին, հօրեղբոր, խնամիին և հարազատին՝

ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆԵԱՆԻ (ՕԾՆԵԱՎ՝ Սելեկիա, 1909ԻԾ)

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 11 Նոյեմբեր 2003, առաւօտեան Լոս Անճելըսի մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երեքշաբթի, 18 Նոյեմբեր, կէսօրուան ժամը 12:00ին, Ֆիլատելֆիոյ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Արլինկթըն գերեզմանատունը Landsdowne Avenue, Drexel Hill, PA 19026:

● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ: ● Ցաւակցութեան համար կարելի է կապ հաստատել c-mail: harmenia@jhsph.edu Հեռաձայն՝ 00 - 1 - (703) 534 43606:

ՍԵԼԻՄ ՈՒՍԹԱ՝ ՊԵՅՐՈՒԹԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՈՒ ՍԵՆՏԻՔԱՅԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱԸ

Երէկ տեղի ունեցաւ Պէյրութի փաստարաններու սենտիքայի նոր նախագահի ընտրութիւն: Սելիմ Ուսթա 1829 թուէով ընտրուեցաւ նախագահ երկու տարուան համար:

Ուսթա իր մրցակիցէն՝ Ռամզի Ժըրէժէն 91 թուէ աւելի ստացաւ: Ընտրութեան մասնակցեցան 3635 փաստարաններ: Նախագահ զօր. էմիլ Լահուտ հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Ուսթայի հետ, և շնորհաւորեց անոր նոր պաշտօնը:


Ուսթա իր ընտրութիւնէն ետք արտասանած խօսքի մը ընթացքին յայտնեց, որ եթէ երկրին գերիշխանութիւնը ապահովուի, ապա նաեւ ազատ որոշումը կ'ապահովուի: Ան խոստացաւ իրականութիւնը առաջնահերթ ձևակառուել և ինքզինքին հանդէպ խոստապահանջ ըլլալ և հսկել երկրին մէջ օրէնքներու գործադրութեան:

Ան շեշտեց, որ պիտի չարտօնէ դատական իշխանութեանց գործունէութեան կատարուած միջամտութիւնները:

Սենտիքայի նախկին նախագահ Ռեմոն Շտիտ յայտնեց, որ ազատութիւնը յաղթած է և յաղորդութիւն մաղթեց Ուսթայի:

Շ. Մ. Ը. Մ.

ՄԱՍՆԱՃԻՒՂ ԵՐՈՒ ԽՄԲԱ ՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ Ա. ԺՈՂՈՎ. 2003-2004 ԾՐԱ ԳՐՈՒՄԻ ԱՇԽԱՏԱՆՔ



Կիրակի, 16 Նոյեմբեր 2003ին, «Աղբալեան» Շ. Մ. Ը. Մ. Մարչանապետութիւնը Համալիքին մէջ, առաւօտեան ժամը 9:00ին սկսեալ տեղի ունեցաւ Շ. Մ. Ը. Մ. Ի Լիքանանի Շրջանային խմբապետութեան կազմակերպած մասնաճիւղերու խմբապետական ընդհանուր Ա. ժողովը, որուն իրենց մասնակցութիւնը բերին Շ. Մ. Ը. Մ. Պէյրութի, Պուրճ Համուտի, Անթիլիասի, Ժոնքտէի, Պուրճի, Այնճարի և Ժուրիէի մասնաճիւղերու խմբապետ և աւելի բարձր պաշտօնի բոլոր պատասխանատուները, ինչպէս նաեւ խմբապետութեան գլխաւոր պատասխանատուները:

թեան և այդ ուղղութեամբ ժողովի առաջարկներուն վրայ: Ապա յաջորդ օրակարգով, շրջանային խմբապետութեան, շրջանային քարտուղարու շրջանային ճիւղի խմբապետներու գլխաւորութեամբ իւրաքանչիւր ճիւղ առանձնաբար քննեց իր դժուարութիւնները և կարիքները ու մշակեց առաջարկներ շաբթուային սկսուած օրակարգի շրջանային խմբապետութեամբ: Կարճ դադարէ մը ետք խօսք առաւ Շրջանային Սկսուական խորհուրդի փոխատենապետ եղբ. Սիմոն Թաշճեան, որ յաջորդութեամբ կարեւորութեան մը մասին խոսեցաւ: Շրջանային Սկսուական խորհուրդի և Շրջանային խմբապետութեան «քաղաքականութիւնը» սկսուական տարեշրջանի ուղղութեամբ, շեշտը դնելով կազմակերպական լուրջ աշխատանքի կարեւորութեան մը մասին խոսեցաւ: Ժողովը սկսաւ «Ով Հայ Արի» քայլերով: Բացման խօսքը կատարեց շրջանային ընդհանուր խմբապետ եղբ. Կարո Մուրաջանեան, որ փոխանցեց

քան մը մաղթեց մասնաճիւղերուն, որմէ ետք ժողովականները շրջանային ընդհանուր խմբապետի գլխաւորութեամբ միասնաբար քննեցին իւրաքանչիւր ճիւղի առաջարկները և ընդհանրական առաջարկներ, մշակեցին նոր տարեշրջանի ընդհանուր յայտագիրը: Վերջին օրակարգով շրջանային ընդհանուր խմբապետը կատարեց շրջանային խմբապետութեան կողմէ թելադրանքներ սկսուական ընթացիկ և թեքնիք աշխատանքներու շուրջ: Ժողովը փակուեցաւ կէսօրուան ժամը 12:00ին, «Յառաջ Նահատակ» քայլերով:

ՄԱՀԱԶԳ

Տիկին Արաքսի Գասպարեան և զուստրը՝ Յասմին Տէր և տիկին Գարրիէլ Քէշիշեան և զաւակուհի
Տէր և տիկին Մինա Արթիսեան և զաւակուհի
Մատիլ, Հրաչ, Շաքէ և Սելբոն Գասպարեաններ
Կահրճեան ընտանիք
Տիկին Ջարուհի Քէշիշեան
Տէր և տիկին Յովհաննէս Արթիսեան և զաւակուհի
Տէր և տիկին Գէորգ Արթիսեան և զաւակուհի
Օրդ. Հայկուհի Արթիսեան
և համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, հօրեղբոր և հարազատին՝

ՄՈՎՍԷՍ ՄԵԼԸՆԻ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ (ՕԾՆԵԱՎ՝ Զեսապ, 1924ԻԾ)

մահը, որ պատահեցաւ կիրակի, 16 Նոյեմբեր 2003ի առաւօտեան, յետ կարճատեւ հիւանդութեան, իր ընկալարանին մէջ, Երեւան:

● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ: ● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալի ղուտը և փեսային Մինաս Արթիսեանի բնակարանը, Ֆանար:

ՄԱՀԱԶԳ


Տէր և տիկին Սեդրակ Տէր Մելքոնեան և զաւակուհի
Օրդ. Էօթենի Տէր Մելքոնեան
Տիար Յարութիւն Տէր Մելքոնեան
և համայն ազգականներ կը գուժեն իրենց ջրով, հօրաբորով և հարազատին՝

ՍԵՂԱ ՏԵՐ ՄԵԼԸՆԵԱՆԻ (ՕԾՆԵԱՎ՝ 1952ԻԾ)

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 11 Նոյեմբեր 2003ին, գիշերուան ժամը 11:00ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ կիրակի, 16 Նոյեմբեր, կէսօրէ ետք ժամը 1:00ին, Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:



ԱՆՍՈՒԱԼ ԳՐԵՆՔ 2003

Եթէ 4րդ, 5րդ և 6րդ դասարանի աշակերտ ես. մասնակցէ՝ «Պատիկ - Մատիկ»-ի հայերէն ուղղագրութեան մրցումին:

– Մրցումին կրնան մասնակցիլ 4րդ, 5րդ և 6րդ դասարանի աշակերտներ:

– Արձանագրութիւնները տեղի կ'ունենան 10 Նոյեմբերէն 2 Դեկտեմբեր. հեռաձայնելով 01 - 260115 թիւին, երկուշաբթիէն Ուրբաթ օրերը, կէսօրէ ետք ժամը 3:00էն 5:00:

– Մրցումը տեղի կ'ունենայ կիրակի, 7 Դեկտեմբերին, Մեքոպեան վարժարանի սրահին մէջ, կէսօրէ ետք, ժամը 3:00էն 4:00 4րդ դասարան, 4:00էն 5:00 5րդ դասարան, 5:00էն 6:00 վեցերորդ դասարան:

– Իւրաքանչիւր մակարդակի շահողը պիտի ստանայ արժեքաւոր նուէր մը. իսկ բոլոր մասնակցողները պիտի ստանան յիշատակի նուէրներ:

– Յանելեալ տեղեկութիւններու համար հետեւիլ «Ապրիլ»-ին:

ԲԱՍՏԱԶԱՅԻՆԻ ԳՐԱՍԱՆՈՒԹ. «Ճաղոցան» կեդրոն. հեռ.՝ 01-241263/4

ԼՕՏԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԵՆ ՆՈՒՆԵ ԵՍԱՅԵԱՆ

ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ՔՆԱՐ» ԵՒ «ԳԱՅԵԱՆ» ՊԱՐԱՆՈՒՄԲԵՐՈՒՆ. ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ ՖԵԼԻՔՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ԵՐԵՔՇԱԲԹԻ, 18 ՆՈՅԵՄԲԵՐ 2003, ԵՈՒՆԵՍՔՕ-Ի ՍՐԱՀԻՆ ՄԷՉ, ՍԱԿ 10.000Լ.Ո., 20.000 Լ.Ո. ԵՒ 30.000 Լ.Ո.

ՏՈՍՄԵՐԸ ԱՊԱՀՈՎԵԼ ՀԱՍՏԱԶԳԱՅԻՆԻ ԳՐԱՆԱՆՈՒԹԵՆ ԵՒ ԳՐԱՏՈՒՆ ՆԱՐԵԿԱՅԻՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՀԻՄՆԱՐԿ

ԼԻԲԱՆԱՆԱՐԱՅ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒ ՌԻՍԻՏԻՉՆԵՐՈՒ ՈՐԱԿԱԴՐՈՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԸ ՈՒՆԵՑԱԻ 3ԱԶՈՂ ՄԵԿՆԱՐԿ՝ ԱԲԵԼԻ ԲԱՆ 70 ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Լիբանանահայ վարժարաններու բարգաւաճման ի խնդիր առնուած շարք մը նախաձեռնութիւններուն իր կարեւոր ներդրումը կը բերէ Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկը՝ 2003-2004 տարեշրջանի տեւողութեան կազմակերպելով հայկական նախակրթարաններու ուսուցիչներու որակաւորման դասընթացք մը: Լիբանանահայ վարժարաններու միջեւ դասաւանդութեան ձեւերուն եւ նպատակակէտներուն այժմեականացման համար անհրաժեշտ նկատուող այս քայլը կ'իրականանայ համագործակցութեամբ Լիբանանի Ազգային Առաջնորդարանի Ռուսական Խորհուրդին:

Լիբանանեան կրթական նոր համակարգին համապատասխանող մեթոտներն ու գիտելիքները լիբանանահայ նախակրթարաններու ուսուցիչներուն փոխանցել միտող այս ծրագիրը կ'ընդգրկէ կրթական եւ մանկավարժական հարցերու մասին դասախօսութիւններ, քննարկումներ, գործնական կիրարկումներ եւ խմբային աշխատանքներ:

Մինչ 2004ի Յունիս երկարող եւ իւրաքանչիւր ամիս անգամ մը նախատեսուած այս ծրագիրին բացումը կատարուեցաւ Ծաբաթ, 15 Նոյեմբերի առաւօտեան ժամը 9:00ին, Համազգայինի Մ. եւ Հ. Արայանեան ձեւարանին մէջ, ուր հաւաքուած էին լիբանանահայ վարժարաններու աւելի քան եօթանասուն ուսուցիչներ:

Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի խնամակալութեան անունով բացման խօսքով հանդէս եկաւ Կրէկուար Գալուստ, որ շնորհակալութիւն յայտնելէ ետք ներկայ գտնուող ուսուցիչներուն եւ անոնց ներկայացուցած վարժարաններու տնօրէններուն, ըսաւ, որ անոնց ներկայութիւնը փայտացուցած է հայ դպրոցին եւ հայ աշակերտին ապագային նկատմամբ հայ ուսուցիչներուն ունեցած պատասխանատուութեան բարձր գիտակցութեան: Ան ըսաւ, որ այս ծրագիրին իրականացման համար կը գործակցին լիբանանահայ գրեթէ բոլոր վարժարաններն ու կրթական մարմինները, որոնց հետապնդած նպատակը «կը հիմնուի հայ դպրոցին ու վաղուան լիբանանահայ մարդուն հասարակաց շահին վրայ, անկախ յարանուանական կամ գաղափարական պատկանելիութենէ»:

Իր խօսքին մէջ Կրէկուար Գալուստ կարեւոր նկատեց նաեւ այն իրողութիւնը, որ այս նախաձեռնութեան շնորհիւ հնարաւորութիւն պիտի ստեղծուի վարգացնելու լիբանանահայ տարբեր վարժարաններու միջեւ կապերը, բան մը, որ պիտի նպաստէ փորձառութիւններու եւ գիտելիքներու փոխանակութեան:

Իր խօսքը աւարտելով, Կրէկուար Գալուստ շեշտեց. «Հաւանաբար մենք այսօր հիմը կը դնենք գործի մը, որ կրնայ ապագային վերածուի շարունակական գործող մեքանիզմի եւ որ կրնայ շրջադարձային նշանակութիւն ունենալ ընդհանրապէս լիբանանահայ համայնքին համար»:

Ծաբ.՝ էջ 10

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒՄՆ 3ԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ
8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
8:45.- «Աստղեր»
9:00.- «Ռատիո - Թատրոն» կը ներկայացնէ Մարի Ռոզ Մանուկեան եւ Մանուէլ Մարգարեան
9:40.- «Առաւօտեան տոն»
11:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
1:30.- Դայանտեան լուրեր
3:00.- Արաբերէն յայտագիր
Դարբարոյց սնունդի զործարաններու եւ անոնց հանդէպ կիրարկուելիք օրէնքներուն մասին
4:45.- «Բարի երեկոյ Կանայ Զայն» ուղղակի ձայնագրութեամբ հանդէպ եւ հետաքրքրական միջոցներով, հարցազրոյց եւ այլն. յայտագիրին հիւրերն են՝ մանեթրո Զարուք Ֆազլեան, ջութակահար Գեորգ Լաբալեան եւ Երեւանի մեքանիզմի պետական թատերախումբի անդամները
7:00.- «Կանայ Սիր» անցնող շաբաթուան մարզական լուրերու ներկայացում:

Arabic header with logos: البيروت, الاموال, and other Arabic text.

15 Նոյեմբերի լիբանանեան օրաթերթերը լուսարձակի տակ առած են Իսրայէլի պաշտպանութեան նախարար Շաուր Մոֆափի կողմէ Լիբանանի եւ Սուրիոյ ուղղուած սպառնալիքները, Իրաք մնալու Պուշի հաստատումը եւ իրաքեան վերջին իրադարձութիւնները, ինչպէս նաեւ պաղեստինեան նորակազմ կազմակերպութեան անդրաւիճակը քայլերն ու ծրագիրները:

ՊԱՐԵՍԻՆԵԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ

«Անուար»ի համաձայն, Համա պատճառ չի գտնուիր Իսրայէլի դէմ իր գործողութիւնները կասեցնելու:

Թերթը գրած է, թէ Իսրայէլեան «Շին Պէթ»ի 4 նախկին նախագահներ յարձակում կը գործեն Ծարուքի վրայ եւ կը յայտարարեն. «Իսրայէլ արաբներէ կ'ընթանայ դէպքերէ կ'ընթանայ դէպքերէ մեծ տագնապ մը, որ կը սպառնայ քանդել պիտի»:

«Բիֆահ Արապի» դիտել տուած է, թէ Համա կը բացառէ որեւէ համաձայնութիւն եւ կը հաստատէ, որ պատրաստ է Բորէյի հետ երկխօսութեան սկսելու:

«Լիուս» գրած է, թէ Իսրայէլեան բանակը շրջանցելով կը զօրակցի պաղեստինցիներուն - հետխաղաղութեան եւ փնադարի հաստատման:

ԻՐԱԶԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

«Անուար» գրած է, թէ աներիկեան օդանաւերը կը շարունակեն ուղևորել Պաղեստին:

Աներիկեան թերթերը լուսարձակի տակ առած են այն երեւոյթը, թէ Սպիտակ Տունը փոխած է իր նպատակները իրաքեան հարցին եւ վարգացումներուն նկատմամբ:

Թերթը դիտել տուած է, որ իտալական ուժերը իր նախատակներուն դիակները կը փնտռեն Տուրքի մէջ:

«Բիֆահ Արապի»ի համաձայն, Պուշ անե-

րիկեան ուժերուն Իրաքէն քաշուիլը կ'առնէ Սատամ Հիւսէյնի եւ Պուշ Լաւէնի ձեռքազրկութեան:

Թերթը նշած է, թէ իրաքեան ընդդիմութիւնը քանի մը անգամ ընթացքին աւելի ամերիկացի պիտուր սպաննէ, քան վերջին ամի կոտորելու 3 տարւան մէջ:

«Լիուս» նշած է, թէ Պուշ կը ծխտէ ամերիկեան պիտուրներուն Իրաքէն քաշուելուն վերաբերող լուրերը եւ կը հաստատէ, թէ անոնք պիտի մնան Իրաքի մէջ մինչեւ ժողովրդավարութեան հաստատում:

«Սաֆիր»ի համաձայն, Ռամաֆելու կը բացառէ ամերիկեան ուժերու հեռացումը Իրաքէն եւ կը նշէ, որ ան պիտի պայքարի ընդդիմութեան դէմ եւ իշխանութիւնը աւելի ցանկաւ իրենք թիրախի ընտրութեան մէջ:

Ըստ թերթին, Բրիտանիոյ մէջ պատերազմը մերժողները կը սպառնան բողոքի ցուցեր կազմակերպել, հակառակ բոլոր խնդրանքներուն:

Թերթը լուսարձակի տակ առած է Խամէնէի այն արտայայտութիւնը, ըստ որուն, Պուշ իսլամներուն ամէնէն ատելի անձն է:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԵԱՆՔ - ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՍՊԱՆԱԼԻԶԵՆԵՐ

«Անուար» օրաթերթը գրած էր, թէ Կեդրոնական Դրամատան կառավարիչը կը բողոքէ իր ստորագրութեան կեղծումին դէմ:

Ըստ թերթին, իսրայէլեան սահմանին վրայ պիտուրական պատրաստութիւններ տեղի կ'ունենան, իսկ Իսրայէլ կը սպառնայ Լիբանանի եւ Սուրիոյ:

«Բիֆահ Արապի» նշած է, թէ Մոֆափ Հըլպալլան կը դատապարտէ իրաքեան ընդդիմութեան հետեւողները մարտելու յանցանքով:

«Մուսաբալալ» անդրադարձած է միջազգային տեղեկագրի, որ կը նշէ, թէ իշխանութեան երկարաձգումը եւ Հարիրիի հեռացումը պիտի պատճառէ տնտեսական կացութեան տապալում:

«Նահար»ի համաձայն, Մոֆափ կը սպառնայ կրկնել

Սուրիոյ վրայ կատարած յարձակումը, իսկ Ուաշինթոնը որախոթեամբ չի դիմադրել կացութեան յարուածութիւնն ու դէպքերու ընթացքը:

«Սաֆիր» գրած է, թէ Իսրայէլ Ուաշինթոնէն Մոֆափի կատարած յայտարարութիւնները թարգմանելով կը յայտնէ, որ սահմանային պատրաստութիւնները կ'զուշացնու են Սուրիոյ եւ Լիբանանի եւ անոնք կրնան ենթարկուիլ նոր յարձակումներու եւս:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԾՐՁԱՆԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

«Անուար» նշած է, թէ Ապտալլա իշխանին խորհրդատուն կը յայտարարէ. «Ռիատի պայթումին ձեռնարկողները սխալեցան իրենք թիրախի ընտրութեան մէջ»:

Ըստ թերթին, Բրիտանիոյ մէջ պատերազմը մերժողները կը սպառնան բողոքի ցուցեր կազմակերպել, հակառակ բոլոր խնդրանքներուն:

Թերթը լուսարձակի տակ առած է Խամէնէի այն արտայայտութիւնը, ըստ որուն, Պուշ իսլամներուն ամէնէն ատելի անձն է:

«Բիֆահ Արապի»ի համաձայն, Պուշ պատրաստ է Իրանի հետ լուծման մը հասնելու եւ կը նշէ, թէ Իրաքը բացառութիւն էր:

«Նահար» գրած է, թէ Սէնտակալ Արաբիա Ռիատի յարձակումները նմանցուց իսրայէլեան ահաբեկչութիւններուն եւ յայտնեց, թէ «Քալիտա»ի 12-18 անդամներ գործադրած են Ռիատի յարձակումը:

«Սաֆիր»ի համաձայն, Խամէնէի Ամերիկայ կը դատապարտէ բռնատեր կազմակերպութիւններուն զօրակցելու յանցանքով եւ կը յայտարարէ, թէ ան բռնու հակադարձութեան պիտի հանդիպի եթէ յարձակումներու ձեռնարկէ Մեծն Իրանի դէմ:

«Տիար» գրած է, թէ Ռիատի մէջ ամերիկեան դեսպանատունը վերսկսաւ իր աշխատանքներուն:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ «ՇՆՈՐՀԱԼԻ» ԵՐԳՉԱՆՈՒՄԻ 30 ԱՄԵԱԿԻ ՇԱՄԵՐԳ
Հովանաւորութեամբ՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՍ Ա. ԿԵՆԱՓԱՆ ԸԱՅՐԱՊԵՏԻՆ
Խմբավարութեամբ՝ ՀՈԳՇ. Տ. ՊԱՐԹԵՒ ՎՐԳ. ԿԻԼԻԿԻՄԵԱՆԻ
Չորեքշաբթի, 19 Նոյեմբեր 2003, Երեկոյեան ժամը 7:30ին, Ազգային Եղիշէ Մանուկեան վարժարանի «Սիրան Մանուկեան» հանդիսարանի, Տրպայի:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ «ԴՐՕՇԱԿ» 2003Ի ԹԻԻ 4Ը
ՊԵՏՆՈՒԹԻՒՆ
ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒ ՌԻՍԻՏԻՉՆԵՐՈՒ ՈՐԱԿԱԴՐՈՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԸ ՈՒՆԵՑԱԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
ՂԱՆԱԿՑԱԿԱՆ ԲԵՄ
• «ԱՆԿԱՆ ԸՅԱՍՏԱՆԸ ԵՒ Ե. Յ. Դ. ԱՆԵԼԻԸ»
ՀԱՅ ԳԱՏ
• Լեւոն Մելիք-Զահնազարեան, «Լ. Դ. Ե. Սի. ՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՍՐԱՊՆԱՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՐՈՇ ՈՒԴԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
• Կ. Խ., «ԱՆԱՏՈՒՄՅՈՒՅ ԸՅԻ ԲԵԿՈՐՆԵՐԸ»
• Արտակ Մաղաթեան, «ՀԱՅՈՑ ՊԱՇԱՏԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՑՈՒՄԸ ԴԻՍՈՒՄ-ԱՍՍԱԿՆԵՐՈՒՄ»
ԳԱՂԱՓՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
• Էդուարդ Յարութեան, «ԱԶԳԱՅԻՆ ԻՆԵՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵԱՆՔԻ ՄՇԱԿՈՅԹ»
• Սկրտիկ Սկրտիչեան, «Ե. Յ. Դ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՏԵԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՒ ԱՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԾՈՒՄՆԵՐՈՒՄ»
ՀԱՄԱԶԳԱՅԻՆՈՒԹԻՒՆ
• Արման Դարագուլեան, «ՌԻՍԿԱՅԻՆ ԻՐԱԿԻ ԶԱԿ»
• Որակի Տիրապետեան, «ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՆՈՒԹԻՒՆԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՄԱՍԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԵՏԱՐՏՈՒՄ»
• Շայկ Պողոսեան, «ՏԵՂԵԿԱԳԻՏԱԿԱՆ ԸՄԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՒ ԱՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ»
ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ
• Վլադիմիր Մանուսեան, «ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՈՍՏԱԿԱՐԱԿԱՆ ՆՃԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ»
ՓՄԱՍՏԱԳՐՈՒԹԻՒՆ
• Վահան Յովհաննիսեան, «Ա. Պ. Ե. ԸՄԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆՈՒԹԵԱՆ 10 ԱՄԵՅ ՓՈՐՁԸ»
ՍԻՆԵՏԻՒՅԻՆ
• Զուլիխտա Յովհաննիսեան, «ՉԵԿՈՅՑ՝ ԸՅԱՍՏԱՆԻ 1918-20 Թ. Թ. ԱՐԴԻՆԱԲԵՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ»

«ԱԶԳԱԿ»ԻՆ
Վճարելով «Ազգակ»ի փարեկան բաժանորդագիրը, մեր ընթերցողները օրաթերթին հեղ կը սպանան նաեւ
ԵՐԿՐ
Զարբարերը, ամսական յանդիմանքով
«Պոպիկ-Սոպիկ»ը, «Անհիպ»ը, «Նաւասարդ»ն ու «Ազգակ-ամսաթերթ»ը:
ԲԱԾՄԵՆՈՐԴԱԳԻՆԸ ԿՐՆԱԿ ՎՃԱՐԵԼ ԱՍՏԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ
«ԱԶԳԱԿ» օրաթերթ, Շաղկոյեան կեդրոն Հեռ. 01-260115, 01-241274, 01-258526
Fax: 01-258529
E-mail: aztag@jnc.com.lb
website: www.aztagdaily.com
www.aztagdaily.com

ԱՖՀԻԼ AFHIL
ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՄԱՐԲԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ
AT HOME
• Wheelchair
• Walker
• Electric Bed
• Manual Bed
• Water Mattress
• Cans
• Sticks
• Serum Tripod
• Walking Frame
RENT AND SALE
• Over Bed Table
• All Kinds Of Oxygen
We Also Provide
• Laboratory service.
• Physiotherapist
• Nurses Aids
• P.T.S. (AMBULANCE)
HOME MEDICAL EQUIPMENT SERVICES
ՅՈՒՑԱՍՐԱՇ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԵՐ ԳՐԱՆԵՆԱԿ՝ ԱՖՀԻԼ, ԱՖԵՏԻ ԶԵՆԸ, Բ. ՅԱՐԿ ԵՆՈ. (01) 242536/7
NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.
ԵՐԿՐ ԿԵԼԸ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՈՐՈՒՍԵ ԱԶԳԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ԿՈՐՈՒՍՆ Ե

Բոլոր կրօնները ունին իրենց բարոյական սկզբունքները, որոնց հիման վրայ կը դաստիարակեն հաւատացեալները:

Քրիստոնէութիւնը ունի իր սկզբունքները, որոնք աստուածային պատուիրաններ են, Սուրբ Գրային յորդորներ, խրատներ, Քրիստոսի քարոզներէն ու առակներէն բխած իմաստութիւններ: Այս ամէնուն ծանօթ է քրիստոնեայ անհատը, որ կիրակնօրեայ թէ տօնական եկեղեցական արարողութիւններուն ընթացքին կը հետեւի հայրերու քարոզներուն, որոնց նիւթը ընդհանրապէս բաղուած կ'ըլլայ Աստուածաշունչէն:

Իւրաքանչիւր քրիստոնեայ անհատ կամ ընտանիք ունի Սուրբ Գիրքի օրինակ մը (եթէ չունի, անպայման պէտք է ունենայ)՝ անձամբ կարդալու, հետեւելու մարգարէութիւններուն, սաղմոսներուն, Առակաց Գիրքին, առաքելներուն կողմէ փոխանցուած գրականութեան:

Ամէն տարի, մեր եկեղեցիները կ'ունենան աւետարանչական հանդիպումներ, դասախօսութիւններ, սուրբ գրային սերտողութիւն, քարոզներ, քրիստոնէական դաստիարակութեան յատուկ դասապահներ, եւ այլն: Այս ամէնը՝ յանուն մաքրակենցաղ, քրիստոնէական վայելի կեանքի մը եւ կենսաձեւի մը հետեւելու: Այս կը նշանակէ նաեւ բարոյական հիմքերու վրայ հաստատուած սկզբունքներու իրագործում, ընտանեկան սրբութեան պահպանում, ընկերային բնական ու բարօր յարաբերութեան որդեգրում:

Բայց երբ կը նայինք մեր շուրջը, կը զարմանանք. հակառակ իբրեւ քրիստոնեայ մեզի թելադրուած պատւիրաններուն, կը մնանք տնայրոյցութեան տղմուտին մէջ, չենք կրնար ձեռքազատիլ մոլութիւններէն:

Աստուծոյ թելադրած պատուիրաններուն դէմ կը գործենք: Ուրեմն հեռու ենք մարդկայնութենէ, կը գողնանք, կը սպաննենք եւ կը պղծենք ընտանեկան սրբութիւնը, այր եւ կնոջ կնքած փոխադարձ հաւատարմութիւնը: Այս կ'ըսենք, որովհետեւ վտանգաւոր կերպով բազմացած են ապահարգանքներուն դիմումները, դէպի մեր առաջնորդարանները կամ դատաստանաւոր խորհուրդներուն ատենաները: Ու հիմա հարցում մը ուղղենք մենք մեզի. ո՞ր կ'երթնք այս ընթացքով:

Բայց կայ նաեւ մետալիս միւս կողմը. սերունդը մեծ մասամբ կ'ապրի «անտառի օրէնքով»: Ան փողոցը կը նախընտրէ իբրեւ բարեկամութիւն կամ սիրոյ կապ ստեղծելու միջավայր՝ արեւմտեան քաղաքներու հետեւողութեամբ: Ինչո՞ւ է այսօր այսքան առատ է թարմատի հասակի սերունդին ոչ վայելիչ կեցուածքը: Փողոցային ըսենք այս երեւոյթին: Ինչո՞ւ մեր մայրերը չեն կրնար դաստիարակել իրենց արու կամ աղջիկ զաւակները: Մեր հայրերը հապարհ... Ինչո՞ւ անձնօթի յանձնած ենք մեր զաւակները: Այսքան դպրոց եւ ուսում, այսքան եկեղեցի եւ քարոզներ, այսքան ակումբ եւ գաղափարափոս դաստիարակութիւն, այսքան մամուլ եւ հաղորդակցութեան այլ միջոցներ, զանազան ազգային ամանակագրութեան պահպանման...:

Կենսի իմաստը փողոցի մակարդակին իջնէ՞ն է արդեօք: Միջոցին ամբողջական ծանրութիւնը գիտութեան նորագոյն հնարքներն են բեռնակները... Ինչո՞ւ է այսքան կապկոց եղած ենք, մոռնալու համար մինչեւ իսկ մեր լեզուն, մեր կենսաձեւը, մեր աւանդութիւնը, մեր ճակատագիրը: Ինչո՞ւ չենք կիրարկել ինքնադաստիարակութիւն կոչուած գիտութիւնը: Ազատամտութիւնը անբարոյութիւն կը նշանակէ արդեօք: Համակարգչային գրութիւնը սորվեցուց այս չարիքը: Ինչո՞ւ չենք սորվիր նոր գիտելու բարիքը եւ կ'որդեգրենք միայն անոնց ոչ ձեռնտու փոխանցումները:

Հաճողով չենք գրեր այս սողերը: Մեր ազգային արժէքները ոտնակոխելը կը քանդէ մեր ազգային լինելութիւնը: Մեր նախնիները նահատակուեցան լեզու, հաւատք եւ հայրենիք պահպանելու համար: Մեր երիտասարդ սերունդն էր նահատակուողը: Այսօր ինչո՞ւ մեր նոր սերունդը այսքան թեթեւ դարձած է, փչող հովերուն հետ թաւալը կորսուելու համար...:

Եթէ կը հաւատանք, թէ անհատները կը կազմեն ընտանիք, իսկ ընտանիքները՝ ազգը եւ ազգը՝ հող ու հայրենիք, այսօր ո՞ր կը գտնուի այդ տիպարային անհատը, որմէ ծագում կ'առնէ կեանքը եւ լինելութիւնը:

Նոր տեսակի դաստիարակութեան պահանջը կը պարտադրուի այսօր մեզի, թէ թոյլ տանք, որ սերունդները կուլ երթան հովերուն քմայքին...:

Մեր ընկերային թէ ազգային կեանքին բարոյական հիմքերը խախտած ըլլալ կը թուին, եւ անդունդը խոր բացուած է մեր դիմաց...:

ՇԱՀԱՆԳՈՒԽՏ

galerie
PIERROT
Specialiste de Meubles D'enfants de 0 à 20 ans

galerie
PIERROT
Liste de Naissance et de Baptême
Autostrade Jal-el-Dib - Tel : 04 / 713233 - 03 / 701607

ԵԹԷ ԶԿԱՅԻՆ ԵՒ ԶԿԱՆ ԶԱՆԳՈՒԱԾԱՅԻՆ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶԵՆՔԵՐ...

Միացեալ Նահանգներու կառավարութիւնը իր աւելի քան 100 հազար գինուորները պիտի փոխադրէ, տուն պիտի տանի, անոնք յոգնած են, բայց պիտի գան նորեր, եւ Համաշխարհային Բ. Պատերազմէն ի վեր առաջին անգամն ըլլալով, բանակ կը կանչուին պահեստի ուժերը: Ինչպէս ասիլ առաջ ըսած ենք, 19րդ դարու թնդանօթային տղանցք չեղաւ, այդպէս պիտի չլլայ իրաքեան պատերազմը, եւ մօտալուտ չի թուիր այն թուականը երբ երկրի իշխանութիւնը պիտի յանձնուի տեղացիներուն:

Թէ ներկայիս երկրին մէջ կը տիրէ անապահո՞վութիւն, չենք կասկածիր: Թէ ահաբեկչական գործողութիւններ կը կատարուին, նոյնիսկ Միջազգային կարմիր խաչ-կարմիր Մահիկի կեդրոնին դէմ, գիտենք, անոնք տեղի կ'ունենան, դատապարտենք թէ ոչ: Բայց դեռ ոչ ոք ուզեց միջազգային ատենաներու եւ ժողովներու մակարդակով քննել այն յստակ ամբաստանութիւնը, որուն համար շղթայագրեծուեցաւ պատերազմը՝ ապակայուն անցնելով ամբողջ շրջանը: Միջազգային հանրային կարծիքը, այսքան ժամադրական ետք, աւերիչ պատերազմէ մը ետքեւս, իրաւունք ունի գիտատարու իրար ունէր թէ ոչ գանգուածային սպանութեան դէմ: Թէ իսկ հատիկ փաստ տուաւ: Թէ իսկ հակառակ անսահման կարելիութիւն ունեցող պետութիւններ եւ միջազգային հաստատութիւններ այդ փաստերը չգտան, չհրապարակեցին, հանրային կարծիքը կրակողութեամբ կը հետեւի, քաղաքային ընդդիմութիւն չի կազմաւորուել: Դեռ մինչեւ ե՞րբ իրաքցիները եւ ամերիկացի երիտասարդներ պիտի գտնուին պատերազմի մը ընթացքին, որ սկսե-

լու բաւարար պատճառ չունենք, իսկ երբ երկար կը տեւէ, կը դառնայ անհեթեթ:

Առանց կրակի մոլուխ չ'ըլլար: Եթէ Անգլիոյ կամ Ամերիկայի մէջ հանրային եւ կեդրոնացան տեղեկութիւնները կը նշանակէ, որ գտնուեցան մարդիկ, որոնք գիտակցաբար եւ անարդար պատճառներով մահերու պատճառ եղան, ինչ որ պարզապէս կը կոչուի դիտումնաւոր եւ կանխամտածուած ոճի: ՄԱԿը եւ իր Ապահովութեան խորհուրդը ժողովներ գումարեցին, բայց թէ ահաբեկչական գործողութիւններ կը կատարուին, նոյնիսկ Միջազգային կարմիր խաչ-կարմիր Մահիկի կեդրոնին դէմ, գիտենք, անոնք տեղի կ'ունենան, դատապարտենք թէ ոչ: Բայց դեռ ոչ ոք ուզեց միջազգային ատենաներու եւ ժողովներու մակարդակով քննել այն յստակ ամբաստանութիւնը, որուն համար շղթայագրեծուեցաւ պատերազմը՝ ապակայուն անցնելով ամբողջ շրջանը: Միջազգային հանրային կարծիքը, այսքան ժամադրական ետք, աւերիչ պատերազմէ մը ետքեւս, իրաւունք ունի գիտատարու իրար ունէր թէ ոչ գանգուածային սպանութեան դէմ: Թէ իսկ հատիկ փաստ տուաւ: Թէ իսկ հակառակ անսահման կարելիութիւն ունեցող պետութիւններ եւ միջազգային հաստատութիւններ այդ փաստերը չգտան, չհրապարակեցին, հանրային կարծիքը կրակողութեամբ կը հետեւի, քաղաքային ընդդիմութիւն չի կազմաւորուել: Դեռ մինչեւ ե՞րբ իրաքցիները եւ ամերիկացի երիտասարդներ պիտի գտնուին պատերազմի մը ընթացքին, որ սկսե-

լու բաւարար պատճառ չունենք, իսկ երբ երկար կը տեւէ, կը դառնայ անհեթեթ:

Առանց կրակի մոլուխ չ'ըլլար: Եթէ Անգլիոյ կամ Ամերիկայի մէջ հանրային եւ կեդրոնացան տեղեկութիւնները կը նշանակէ, որ գտնուեցան մարդիկ, որոնք գիտակցաբար եւ անարդար պատճառներով մահերու պատճառ եղան, ինչ որ պարզապէս կը կոչուի դիտումնաւոր եւ կանխամտածուած ոճի: ՄԱԿը եւ իր Ապահովութեան խորհուրդը ժողովներ գումարեցին, բայց թէ ահաբեկչական գործողութիւններ կը կատարուին, նոյնիսկ Միջազգային կարմիր խաչ-կարմիր Մահիկի կեդրոնին դէմ, գիտենք, անոնք տեղի կ'ունենան, դատապարտենք թէ ոչ: Բայց դեռ ոչ ոք ուզեց միջազգային ատենաներու եւ ժողովներու մակարդակով քննել այն յստակ ամբաստանութիւնը, որուն համար շղթայագրեծուեցաւ պատերազմը՝ ապակայուն անցնելով ամբողջ շրջանը: Միջազգային հանրային կարծիքը, այսքան ժամադրական ետք, աւերիչ պատերազմէ մը ետքեւս, իրաւունք ունի գիտատարու իրար ունէր թէ ոչ գանգուածային սպանութեան դէմ: Թէ իսկ հատիկ փաստ տուաւ: Թէ իսկ հակառակ անսահման կարելիութիւն ունեցող պետութիւններ եւ միջազգային հաստատութիւններ այդ փաստերը չգտան, չհրապարակեցին, հանրային կարծիքը կրակողութեամբ կը հետեւի, քաղաքային ընդդիմութիւն չի կազմաւորուել: Դեռ մինչեւ ե՞րբ իրաքցիները եւ ամերիկացի երիտասարդներ պիտի գտնուին պատերազմի մը ընթացքին, որ սկսե-

լու բաւարար պատճառ չունենք, իսկ երբ երկար կը տեւէ, կը դառնայ անհեթեթ:

ՏՈՍՍ ԿՈՎ ՊԱՆԵՅԷՔ, ՄԱԾՈՒՆ ԿԵՐԷՔ...

Մամուլին փոխանցած տեղեկութիւնները՝ Լիբանանի տարածքին առանց արտօնագիրի բանող գործարաններուն մասին, սահմանեցուցիչ են եւ ցուցանիչ, թէ ինչպիսի ահաբեկչութիւնները անխառնակ կը տիրէ այս մարզին մէջ:

Խաբուած ըլլալու գագաթները աւելի, հրապարակուած քիւրդները, որ տակնուվրայ կ'ընեն քաղաքացիները, որոնք ատենը մէջ մը պնակ մը մածուն ուտելու հաճոյքը կը կարծէին ապրած ըլլալ, երբ միամտօրէն կը դալէին սուլփրմարքէթէն գնուած մածունը: Միջոցով հիմա պարզուած է, որ պանթրոնի եւ մածունի 400 գործարաններէն միայն 30ը աշխատանքի արտօնագիր ունի եւ ամբողջացուցած է առողջապահութեան նախարարութեան հաստատած պայմանները:

Խուճապի մատնուած են նաեւ իրենց բնակարաններուն ծորակները շատոնց վերջնականապէս փակած եւ խանութներէն կերպրկալէ մեծ շիշերով շուր գնողները ու զանոնք խմողները, որովհետեւ յանկարծ երեսու կու գայ, որ 1000էն աւելի գործարաններ պարզապէս ծորակէն շուր կը լեցնեն եւ կը ծախեն իրենց առողջութեան հոգ տանող քաղաքացիներուն:

Տակաւի կը խօսուի բժշկական տարրալուծարաններու, պահածոյ փնացած միսերու եւ այլ ուտելիքներու գործարաններու փակման մասին: Խուճապ կը ստեղծուի յատկապէս, երբ կ'անդրադառնանք, որ առանց արտօնագիրի բանող բժշկական տարրալուծարաններ ինչ աւել կրնան գործել, եթէ օրինակ համար շաքարախտաւորի մը արեան մէջ շաքար չգտնեն եւ խեղ մարդը վստահեցնեն, որ բան մը չունի, շատ առողջ ես, գնա՛ եւ ուզածդ կեր:

Առանց արտօնագիրի այսքան մեծ քիւրդ բանող գործարաններուն այս համաճարակին ի տես ուրեւ քաղաքացի կրնայ հարց տալ, որ երկրին մէջ արտօնագիր ունեցող գործարան ընդհանրապէս գոյութիւն ունի: Եւ ո՞վ կը շնորհէ արտօնագիրը: Որո՞ւ հաստատած չափանիշներուն հիման վրայ արտօնագիր կը տրուի: Կաշառակեր եւ իր քրոնի փակած պատասխանատուի՞ն, թէ պարկեշտ մասնագետի՞ն, որ մտահոգ է ընդհանուրի բարօրութեամբ:

Այս հարցումները բնականաբար ունին պատասխաններ: Սակայն ցաւալին այն է, որ հոս կենսական մահ հարցումներ ընդհանրապէս պատասխաններ չունին, եւ ո՞վ որ կը փորձէ գէթ բան մը հասկնալ պարզուած խայտառակութեան, կը գարնուի ամուր պատերու, որոնք ետին քաղաքացիները անախտաբար ունին պատասխաններ: Սակայն ցաւալին այն է, որ հոս կենսական մահ հարցումներ ընդհանրապէս պատասխաններ չունին, եւ ո՞վ որ կը փորձէ գէթ բան մը հասկնալ պարզուած խայտառակութեան, կը գարնուի ամուր պատերու, որոնք ետին քաղաքացիները անախտաբար ունին պատասխաններ:

Իսկ չակերտեալ տարրալուծարանները: Տղամարդը յոյ կը յայտարարեն, շաքարախտաւորին իրաւունք կու տան շաքարեղէն ուտելու, մէկու մը յօղացալի արեան քնուրբան արդիւնքը կը յանձնեն ուրիշի մը եւ տակաւին ի՞նչ տարօրինակութիւններով իրենց գոհներուն շիշերուն հետ կը խաղան:

Հիմա կը մնայ հարց տալ: Ո՞վ է այս խառնակութեան պատասխանատուն: Կամ՝ ուրիշ հարցում մը: Երբեք պիտի պատժուի՞ն օրինականները եւ անոնց կնքահայրերն ու հովանաւորները:

Մինչ այդ քաղաքացի ի՞նչ թող ընէ: Իր տան ետին կամ պատշաճաբայ քոյր կամ կո՞վ թող պահէ, որպէսզի միտքը հանգիստ մածուն, կարագ եւ պանիր ուտէ:

Ա. ԱՊՏԱԼԵԱՆ

Le Savoir-Faire en Lumière

G. AYANIAN & SONS

Dora, (01)255222/3/4/5/6
Gemmayzé, (01)447000-445396
(03)627728/9
Fax: (01)265187-582357
E-Mail: gasons@dm.net.lb
www.ayanian.com

BALTAYAN ELECTRONIC

Ա. Մանուկյան
Գրայն Համուր
Արմենիա պողոտայի
հիւսիս: 02 / 262961
Ա. Մանուկյան
Տարր. հիւս: 01 / 255699

ԱԿՆԱՐԿ

ԻՆՉՈՒՒՆ ԵՆ ՅԵՏԱԶԳԻՈՒՄ ԱՐՅԱՆՏԵԱՆ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երկար ամիսների ընթացքում միջազգային հանրությունը սպասում էր Հարավային Կովկասում համապատասխան ընտրությունների անցկացմանը Արցախյան հակամարտության կարգադրմանը վերադառնալու եւ Հայաստանի ու Ազրբայժանի նախագահների մակարդակով բանակցային գործընթացի շարունակությունը: Եւ կարծես Եւրոպական Խորհրդի Մինսկի խմբի եռակողմ խաղաղության հարցերի միջնորդների մայրաքաղաքներից յուրեր էին ուղարկում, թե շտապում են հակամարտության շրջան այցելել օր առաջ: Տեղերում էլ ամերիկեան տեսաբանները առիթը բաց չէին բողոքում հաստատելու, որ Միացեալ Նահանգները բացառապես կողմ են հակամարտության լայնարձակ խաղաղ միջնորդներով գործելուն: Կարծես թէ վերջին «խոչընդոտը» իրան Ալիեւի ընտրությունները, որի աւարտից յետոյ միջազգային միջնորդները պետք է ժամանակին Հարավային Կովկաս: Յուսուցիչ դարձան անգամ այցելությունները օրը՝ 2003 թուականի Նոյեմբերի 8ը: Եւ հենքից ընտրությունները շարունակությունը, յայտարարեց, որ համախաղաղության ժամանակը յետաձգում է մինչեւ 2003 Պեկտեմբերի վերջը:

Ուշագրաւ է, որ այս հակիրճ ձեւաւորման ժամանակ շրջան եկող իրաւասու պաշտօնեաներից ոչ մէկը բացառութիւն չտուեց: Առաջինը արձագանքեց Հայաստանի նախագահը, որ Սելիմի լեռնացի մայրուղու շինարարության աւարտի առիթով՝ հանդիպելով լրատուամիջոցների ներկայացուցիչներին հետ, ճշդեց, թէ Մինսկի խմբի եռակողմ խաղաղության դեռ չեն ժամանում, քանի որ Ազրբայժանը պարտաս չէ: Պարւում, ի հարկէ, անմիջապէս «ճեղքացան», եւ եթէր քողարկուեցին սեփական վարկը բարձր պահելու չքմեղանքներ: «Նորընտիր նախագահը չի կարող ընդունել միջնորդներին, որովհետեւ երկրի ներսում կան շատ աւելի կայուն անյետաձգելի գործեր»: Յուսելեցին նաեւ, որ համախաղաղությանը յայտարարեց, որովհետեւ Ազրբայժանի եւ Հայաստանի նախագահների աշխատանքային ժամանակակարգերը իրար չեն համապատասխանում: Լուրջ միտք էլ, որովհետեւ ինչու պետք է համապատասխանելին. նախկինում երբեք մեծ թոյլ փաստարկ չի բերուել մեծատարած առիթների պատճառաբանութեան համար:

Ինչեւիցէ, փաստը մնում է փաստ, որ ամիսներ շարունակ տարփոխուող ցանկութիւնը ժամանել հակամարտութեան գոտի, անպատասխանելի յետաձգում է՝ առանց որեւէ բացատրութեան միջնորդ տեղափոխումների կողմից: Պետք է մոռանալ, որ գուցահեռաբար յետաձգուեց նաեւ Լեռնային Ղարաբաղի գծով գեկուցող, Եւրոպական Խորհրդի պատուիրակ թերի Տէյվիսի այցը: Ինչպէս ասում են, մեծ քաղաքականութեան մէջ պատահականութիւններ չեն լինում: Այսինքն՝ ի՞նչ հանգամանքներ են ի յայտ եկել, որ կարուել մի շարժումով իւրօրինակ ընդմիջում է վերցնում արցախյան բանակցային գործընթացում:

Առարկայօրէն պետք է նայենք շահագրգիռ երկրների կողմը:

Հայաստանում կարծես ամեն ինչ յստակ է. արտաքին գործերի նախարարի բերանով յայտարարուել է, որ մեր կողմը պատրաստ է վերսկզբէն բանակցութիւնները յայտնելից, որտեղ նրանք ընդհատուել էին Ազրբայժանի՝ այլեւս նախկին նախագահ Հայտար Ալիեւի հիւանդութեան պատճառով: Վստահ իր յարգանակին, դեռ ընտրուելուց առաջ, Ալիեւ-կրտսերը բազմիցս կրկնել է իր երկատուած միտքը՝ կողմ ենք խաղաղ կարգադրմանը, բայց անհրաժեշտութեան դեպքում չենք հրաժարուել ուժային միջոցների դիմելուց: Նոյն բանը նա պարզորոշ վերարտադրեց նաեւ նախագահական երդման արարողութեան սեղմ տողերում: Այսինքն՝ ընտրութիւնը նա չի ասում. այդպէս բազմիցս խօսել է նաեւ Ալիեւ-աւագը եւ միշտ էլ նստել է բանակցութիւնների սեղանի շուրջ լինի Սաղարակում, Փարիզում թէ Քի Ուէսթում:

Կտրուել շարժումներ չի կատարել նաեւ Թուրքիան, որն իր զինուորականների անունից հաւաստիացնում է պատրաստակամութիւնը գործելու ի նպաստ Ազրբայժանի: Թեւեւ հարկ է նկատել, որ Անգարան այսօր ունի այլ զլխացաւանք: 10 հազարանոց բրթակառ բանակի իրաք ներխուժելով լճի համար տաճակատման մէջ յայտնուել իսլամական աշխարհի հետ: Ի դէպ, նոյնը նաեւ Պարսն, որի 130 հազարանոց զորախումբը արդէն Իրանում է: Այս համաթեքսթում, իրաքեան ուժգնաբարձրական աւագուտներում էլ աւելի խորն է մխրեւում Ուաշինգթոնը, որը պատերազմի աւարտից յետոյ շատ աւելի զինուոր է կորցրել, քան բուն մարտերի ժամանակ: Իսկ արաբները, ի տարբերութիւն քաղաքականութիւնի, օր առ օր հզորացնում են դեռեւս փարսի-գանական դիմադրութիւնը: Բացի այդ, միջազգային հանրությունը ոչ համարժեք արձագանքեց ծորք Պուշի կանչին՝ ներառելով ներկայիս իրարի տնտեսութեան գերակայութեան նպատակներով: Ասել է՝ ամերիկեան քաղաքականութիւնը ուշադրութիւնը գամել է Մերձուոր Արեւելի վրայ եւ շուտ չէ, որ կարող է լիարժեք, մեծապէս յարգանակ տանել: Իսկ հեռակարում

ՇԻՐԱՋ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
Շար.ը՝ էջ 8

ՐԱՅԱՇԽԱՐԸ - ՐԱՅԱՇԽԱՐԸ - ՐԱՅԱՇԽԱՐԸ - ՐԱՅԱՇԽԱՐԸ - ՐԱՅԱՇԽԱՐԸ - ՐԱՅԱՇԽԱՐԸ

ԹԵՐԱՆ

«ՌՈՍՏՈՍ» ԵՐԻՏԱՍԱՐԳԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ 25ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ

23 Հոկտեմբերին Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան թեհրանի կեդրոնի «Կոմիտաս» սրահին մէջ մեծ շուքով տեղի ունեցած է «Ռոստոմ» երիտասարդական Միութեան հիմնադրութեան 25ամեակին նշումը:

Թեհրանի «Ալիք» օրաթերթը կը հաղորդէ, թէ հանդիսութեան ծրագիրը յազմեցած է բանաստեղծական եւ գեղարուեստական բաժինով: Օրուան բանաստեղծ եղած է Ն. Յ. Գ. Բիւրոյի անդամ Ալլադիթ Աճէմեան, որ խօսած է 25ամեայ երիտասարդական միութեան ծաւալած գործունէութեան մասին: Այս առիթով Սուրիայէն եւ Հայաստանէն հիւրաբար թեհրան գտնուող երիտասարդական - ուսանողական միութիւններուն ներկայացուցիչները արտասանեցին իրենց շնորհաւորական խօսքերը:

Գործադրուեցաւ գեղարուեստական ճոխ յայտագիր, որուն ընթացքին երիտասարդներ հանդէս եկան երաժշտական կատարումներով եւ ասմունքով: Գուցարուեստական սահիկներ, տեսաերիզ մը, ինչպէս նաեւ՝ ներկայացուցեցաւ Լեւոն Շանթի «Շիրաջուածը» թատերգութեանէն հատուած մը՝ բեմադրութեամբ Անահիտ Արաղի: Կազմակերպուած էր նաեւ նկարներու եւ հրատարակութիւններու ցուցահանդէս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՅՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՎ ԱՌԱՋԻՆ Է ԱՊՂԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԸՐԱՔԻՆ

ԱՊ Հի երկիրներու վիճակագրութեան վարչութեան տուեալներով, այս տարուան Յունուար - Սեպտեմբեր ամիսներուն համախառն ներքին արդիւնքի աճին ամէնէն բարձր ցուցանիշը ԱՊ Հի երկիրներուն մէջ արձանագրուած է Հայաստանի մէջ՝ 15,2 առ հարիւր:

Վիճակագրութեան վարչութեան նախագահը յայտնեց, որ Յունուարէն Սեպտեմբեր համախառն ներքին արդիւնքը ԱՊ Հի երկիրներուն մէջ (բացառութեամբ՝ Թուրքմենիստանի եւ Նըրիւզղիստանի) անցեալ տարուան նոյն ժամանակաշրջանին համեմատութեամբ միջին հաշուով 7 առ հարիւրի աճ արձանագրած է, միտմամանակ՝ համախառն ներքին արդիւնքի աւելի մեծ աճ արձանագրուած է Հայաստանի (15,2 առ հարիւր), ապա՝ Ազրբայժանի (10,5 առ հարիւր) եւ Ղաղախստանի (9,2 առ հարիւր) մէջ:

«Այս ժամանակաշրջանին արդիւնաբերական արտադրանքի արտադրութիւնը ԱՊ Հի մէջ միջին հաշուով աճած է 8 առ հարիւրով եւ դարձեալ աճի ամէնէն բարձր ցուցանիշը արձանագրուած է Հայաստանի արդիւնաբերութեան մէջ՝ 20,5 առ հարիւրով», հաղորդած է վիճակագրութեան վարչութիւնը:

ԼԵՒՈՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ԾՆՆԳԵԱՆ 75ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ

Վերջերս լրացան Արցախի դրական ընտանիքի փաստակաշատ անդամներէն մէկուն՝ գրող - բանահաւաք եւ մանկավարժ Լեւոն Յարութիւնեանի 75ամեակը: Հեղինակը յայտնի է «Նշխարներ», «Կաթնակորեկ», «Կարօտի կանչ» եւ «Իմ տագնապների, իմ հաւատի ուստան» ստեղծագործութիւններով:

Կարելով վե ստեղծագործելով Մարտունիի շրջանի Աղան գիւղին մէջ, Արդրեւանյանն չէ մնացած հասարակութիւնը մտահոգող խնդիրներէն: Աւանդապահ գրողին սկզբունքային գաղափարները արտացոլած են անոր բոլոր ստեղծագործութիւններուն մէջ:

Այս առիթով գրողի ծննդավայրին մէջ նշուեցաւ անոր ծննդեան 75ամեակը: Մեծարանքի հանդիսութեան մասնակցելու եւ յղբիւրներին շնորհաւորելու եկած էին Լեւոնյանի Ղարաբաղի Հանրապետութեան նախագահի աշխատակազմի ղեկավար Արարատ Դանիելյան, կրթութեան, մշակույթի եւ մարմնակրթութեան նախարար Արմէն Սարգսեան, Մարտունիի վարչակազմի ղեկավար Միքայէլ Յովհաննիսեան, Արցախի Գործընդուն Միութեան վարչութեան նախագահ Վարդան Յակոբեան, պատեմաւարներ եւ Լեւոն Յարութիւնեանի գործընկերները:

ՍԵԼԻՄԻ ԼԵՆՆԱՆՅՔՈՎ ՄԱՅՐՈՒՂԻՆ ՊԻՏԻ ԽՈՒՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Սեւան - Մարտունի - Գետափ մայրուղիի Մարտունի - Գետափ հատուածին բացումը կատարելով, նախագահ Ռոպէրթ Քոչարեան վերջերս յայտարարեց, թէ ճանապարհային ենթակառուցչի զարգացումը մեծապէս պիտի նպաստէ Հայաստանի տնտեսութեան:

Ըստ նախագահին, այս ճամբան կը կապէ Հայաստանի հիւսիսային եւ հարաւային շրջանները, ինչ որ պիտի խթանէ տնտեսութեան զարգացումը:

Ըստ կապի եւ փոխադրութեան նախարար Անդրանիկ Մանուկեանի, Սելիմի լեռնանցքին անցող մայրուղին պատմական «Մետաքսի ճանապարհ» է, որ կտրելով լեռնանցքը, կը կապէ Վայոց Ձորի եւ Գեղարքունիքի մարզերը, ունի ոչ միայն տնտեսական, այլ նաեւ՝ միջազգային նշանակութիւն եւ իրանէն տարանցիկ բեռներու փոխադրումը գլխաւորաբար պիտի կատարուի այս ուղիով: Նախարարը նշեց նաեւ, որ Հայաստանի մէջ կը նախատեսուի կառուցել քանի մը ճամբաներ եւս եւ այդ նպատակով 30 միլիոն տոլար արժէքով «Համայնքային ճանապարհներ» ծրագիրը ներկայացուած է Համաշխարհային Դրամատան:

Նորակառուց եւ 57,5 քիլոմետր (մօտաւորապէս 40 մղոն) երկարութեամբ մայրուղիի շինարարական աշխատանքները սկսած էին 2002ի Սեպտեմբերին, «Լինսի» Հիմնադրամին կողմէ յատկացուած շուրջ 9 միլիոն տոլարով:

Նոյն օրը, Սելիմի լեռնանցքի ճամբու հատուածին վրայ, նախագահ Քոչարեանի մասնակցութեամբ բացումը կատարուեցաւ նաեւ յուշակոթող Քրքր Գրիգորեանին նուիրուած երախտագիտական արձանագրութեամբ:

Բացման արարողութեանէն ետք լրագրողներուն հետ ունեցած զրոյցի մը ընթացքին նախագահ Քոչարեան անդրադառնալով Համաձայնական կառավարութեան գործունէութեան՝ նշեց, թէ քաղաքական երեք ուժերու համագործակցութեան եզրերը արդէն կ'երեւին եւ արդէն սկսած է ձեւաւորուել տարբեր քաղաքական ուժերու համագործակցութեան մշակույթ: Նախագահ Ռոպէրթ Քոչարեան ըսաւ, որ իշխող համաձայնական կառավարութիւնը պէտք է համարձակութիւն ունենայ խօսելու ոչ այնքան հաճելի, բայց այնպիսի հարցերու շուրջ, «որոնց մասին պէտք է պարզ եւ ազնիւ խօսիլ՝ պատասխանատուութիւն կրելով»:

Խօսելով տնտեսական աճին մասին, նախագահ Ռ. Քոչարեան նշեց, որ նախորդ ինը ամիսներուն ընթացքին արձանագրուած է 15 առ հարիւրէն աւելի տնտեսական աճ, իսկ արտածումի ծաւալը աճած է աւելի քան 40 առ հարիւրով:

Աճի ցուցանիշներուն նկատմամբ կասկածներ փարատելու նպատակով, նախագահը նշեց, որ Հայաստանի տնտեսական ցուցանիշներուն ուսումնասիրութիւնները կը գտնուին Համաշխարհային տարբեր տնտեսական կազմակերպութիւններուն հսկողութեան տակ եւ աճի ցուցանիշը արժանահաւատ է:

ՈՒՍՏԱՆԻՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՐԱՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՆՈՒՒՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՔԵՋԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ

Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ճոն Օրտուէյ Քոնկրէտի անդամներուն հետ Ուաշինգթոնի մէջ տեղի ունեցած հանդիպման մը ընթացքին ներկայացուցած է «Ամերիկեան կառավարական օգնութիւնը Հայաստանին» խորագրով կայքէջը:

www.usa.am/assistance կայքէջին մէջ տեղեկութիւններ կան Հայաստանի տրամադրուած ամերիկեան օգնութեան ծաւալներուն մասին. այդտեղ կը նկարագրուին տնտեսութեան տարբեր մարզերուն եւ երկրի այլազան շրջաններուն մէջ իրականացուող ծրագիրները: «Կայքէջին մէջ ներկայացուած տեղեկութիւնները կը վկայեն այն կարեւորութեան մասին, որ ամերիկեան վարչակազմը կու տայ Հայաստանի հետ համագործակցութեան», յայտարարած է դեսպան Ճոն Օրտուէյ:

ԱՐՅԱՆԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

«Վերադարձ Արցախ» ծրագիրով ընթացիկ տարուան ընթացքին Արցախի մէջ վերաբնակեցուած է 12 ընտանիք, այսինքն՝ ընդհանուր թիւով կ'իրականացուի Լեւոնյանի Ղարաբաղի Հանրապետութեան աւելցնելու վերաբնակեցման վարչութեան եւ Հայաստանի կառավարութեան աւելցնելու տեղափոխութեան եւ գաղթականներու վարչութեան համագործակցութեամբ:

Տեղափոխուող ընտանիքներուն համար կը գործէ արտօնութիւններու համակարգ մը. ընտանիքի գլխաւոր անդամին կը տրամադրուի 20 հազար, իսկ իւրաքանչիւր անդամին՝ 5 հազար դրամ: Վերաբնակողներուն կը տրուի առանձնատուն՝ տար տարի ապրելէ ետք սեփականութեան իրաւունքով, ընտանիքի իւրաքանչիւր անդամին կը յատկացուի վեց հազար մեթր հող՝ առաջին հիփոթեք տարիներուն տուրքերէ ձեռքազատած մնալու արտօնութեամբ: Կը տրուի նաեւ դրամական վարկ, որ կը սկսի 120 հազար դրամով՝ նայած ընտանիքին անդամներուն թիւին:

ՅԻՐՏԻՈՅ ՆԱՆՍԵՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԳՐԱՄ «ՈՍԿԻԵ ՅՈՒՇԱՄԵՏԱԸ» ՈՒՑԱՅԵԼ ԵՂՈՅԵԱՆԻ

Նոսկէլեան մրցանակի նորվեգիացի դափնեկիր Ֆրիտոֆ Նանսէնի միջազգային հիմնադրամը «Ոսկիէ յուշամետաղ» մը շնորհած է Վանաձորի պետական մանկավարժական հիմնարկի նախագահ Ռաֆայէլ Եղոյեանին:

Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի թղթակից անդամ փրոֆ. Ռաֆայէլ Եղոյեան վերոյիշեալ յուշամետաղին արժանացած է իր գիտական, մանկավարժական եւ հասարակական գործունէութեան, ինչպէս նաեւ համամարդկային ու մարդասիրական նուիրուածութեան եւ մնայուն կերպով մտաւորականութեան սատարելուն համար:

ՎԱՆԱՁՈՐ

ՀՆԳՎԱԿԱՆ ԵՐԳԻ ԵՒ ՊԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ

Վանաձորի «Շարլ Ազնաւուր»ի անուան նոր բացուած Մշակույթի Տան մէջ ունեցած է կապիտալ Ռապիտարանթ Թակորի անուան համալսարանի մշակութային խումբի խնամքով:

Այս մշակութային օճախին մէջ տեղի ունեցած համերգը իր տեսակին մէջ երկրորդն էր: Համերգին նախաձեռնողը Հայաստանի մէջ Հնդկաստանի դեսպան Տրիփա Վոհրան է: Ուսանողներէ եւ դասախօսներէ կազմուած խումբը հանդէս եկած է հնդկական ազգային երգի եւ պարի մատուցումով:

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՀԻՆՂԵՐՈՐԴ ՏԱՐԵՂԱԲԱԸ

Երեւանի Պետական համալսարանին մէջ վերջերս նշուեցաւ միջազգային յարաբերութիւններու բաժանմունքին հիմնադրման հինգերորդ տարեդարձը: Հանդիսութեան ներկայ էին Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան, Հայաստանի Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւններու մնայուն յանձնախումբի նախագահ ընկ. Արմէն Ռուստամեան եւ այլ պատուատար անձեր:

Հինգ տարուան պատմութիւն ունեցող բաժանմունքին 30 շրջանաւարտները արդէն կ'աշխատին Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մէջ: Ուսանողներուն կող ուղղելով սորվելու եւ լաւ մասնագէտներ դառնալ, Վ. Օսկանեան նշեց, որ յատկապէս այս համակարգը չի հանդուրժեր միջակութիւնները: Ան աւելցուց, որ եթէ ուսանողը կատարեալ կերպով կը տիրապետէ լեզուներուն, նաեւ գիտելիքներ եւ այդ գիտելիքները ճիշդ օգտագործելու կարողութիւն ունի, ապա նա պատրաստի մարդու՞ է՝ ապագային դիւանագէտ դառնալու համար:

Նշեք, որ ներկայիս միջազգային յարաբերութիւններու բաժանմունքը կ'ապահովէ երկրի արտաքին գործոց նախարարութեան եւ արտաքին յարաբերութիւններու խորհրդարանական մնայուն յանձնախումբի մարդու՞ էի պահանջները՝ առաջարկելով համապատասխան մասնագէտներ: Յաղթահարելով ինքնուրոյն միաւոր դառնալու դժուարութիւնները, ներկայիս Երեւանի Պետական համալսարանի միջազգային յարաբերութիւններու բաժանմունքը համալսարանի ամէնէն շատ պահանջարկ ունեցող բաժանմունքներէն մէկն է:

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐՆԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վերջերս Հայաստանի կառավարութեան բարեգործական ծրագիրներու համարեքումի յանձնախումբը քննարկած է 2003-2004 թուականին իրականացուելիք բարեգործական 8 ծրագիրներ: Քննարկուած ծրագիրներուն ամէնէն կարեւորները հետեւեալներն են.

- 1- «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին կողմէ իրականացուող կարգ մը բնակելի շէնքերու եւ դպրոցական շէնքերու վերանորոգման ծրագիրները:
- 2- «Կամար» բարեխրական հասարակական կազմակերպութեան կողմէ իրականացուող «Դպրոցական կահոյք Գիւմրիի նորակառուց դպրոցներուն» ծրագիրը:
- 3- «Մեծն Ներսէս» բարեգործական հասարակական կազմակերպութեան կողմէ իրականացուող «Օտանդակութիւն արցախեան երեխաներուն» շարունակական ծրագիրը:
- 4- «Համահայկական ինքնուրոյն Համաշխարհային կոմիտէ» հասարակական կազմակերպութեան կողմէ իրականացուող ծրագիրը, որուն նպատակն է Համահայկական Յոր խաղերու արտադրանքներուն, Համաշխարհ

Նայ Նորույնը արագորոշում հիմնով

«ՊԵՏՔ Ե ՔԱՂԱՔԱԿԱՆԱՆԱԼ ԱՅՈՒՆ»

«ԱՐԱՐԱՏ» ԺԱՊԱԿԵՆԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԻՆՔԼԱԿԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ ԽՐԱՆ ԵՐ ԿԸ ԴԱՌԱՅ ԱՐՄԻՆԵ ԽԱՆՃԵԱՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԸԱՅՎԱԿԱՆ ՑԵՂԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ ԱՐԵԱՐԹՈՂ ԺԱՊԱԿԵՆ ԵՐ ՍՏԵՂԵՆԼՈՒ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ՄԵԿԱՍԻՆ ՊԱՏՍՈՒԹԵԱՆ ՄԵՋ ԴԵՐ ԵՐ ԿԸ ՏԵՍԵ ԻՐԱՋԱՆՉԻՐ ԸԱՅՈՒ ՄԱՍԻՆ «ԱՉՂԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ» ՄՃԱԿԵՆՈՒ ԱՆԵՐԱՍՏԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Վերջին երեք տարիներում, «Արարատ» ժապավենի յղացումները, պատրաստությունները եւ հրատարակումները ժամանակ, Աթոմ էկոլոգիան ու ես տարրեր հարցադրումներ ուղղած ենք մենք մեզի: Ասիկա արտասովոր բան մը էր, սակայն այս պարագային շուտով յայտնի դարձաւ, թէ բազմաթիւ պատասխաններ իրենց անդրադարձը պիտի ունենային մեզի անծանօթ բնագաւառներում մէջ: Երբ ժապավենին բնագիրը պատրաստ էր, արտասովոր ճնշումի տակ էինք: Աստիճանաբար սկսանք անդրադառնալ, թէ այլեւս պատասխանատուն չէինք միայն մեր ըսելիքին, այլ նաեւ աւելի լայն հաւաքականություններ մը ձայնին: Ժողովրդավար երկրի մը մէջ ապրելով ու գործելով՝ գեղարուեստական ազատություն ունէինք: Սակայն նիւթին ընդթը նոր առաջնահերթություն մը կը պարտադրէր: Ժապավենը իր նախորդներուն նման ինք իր մասին պէտք էր խօսէր, պատմություն մը պատմէր, տիպարներ ներկայացնէր, եւ ամէն բանէ աւելի՛ երաշխաւորէր, որ աւելի քան 6 միլիոն հայեր կարենային իրենց սեփական պատմությունը տեսնել անոր մէջ:

Բազմաթիւ հայեր առաջարկեցին դերակատար դառնալ անձնապէս եւ չափուց կերպով: Հայկական կազմակերպություններ իրենց զօրակցությունը կը յայտնէին ժապավենին տարածումին համար (անշուշտ ոչ նիւթապէս, թէ եւ «է.մ. ձի. է.մ.»-ի մէջ Ալեքս Եմէնեանները եւս նման առաջարկ չկատարեցին): Թրքական կազմակերպություններ մեզի հետ կապ կը հաստատէին, որպէսզի արտոնություն ստանային բնագիրը կարգաւոր, անոր առջին նկարահանումը տեսնելու եւ ժապավենին մասին խօսելու՝ նախքան անոր հրատարակումը: Անոնք կ'ուզէին վստահ ըլլալ, թէ «Արարատ» սխալ տպագրություն պիտի չստեղծէր: Անհատներ կը հեռաձայնէին իրենց ընտանեկան պատմությունները, իրենց սեփական պատմությունները բաժնետէլու համար մեզի հետ: Մեծ թէ փոքր կը փափաքէին լուր դերեր խաղալ պատասխան վրայ, յարգանքի տուրք մը մատուցելու համար անոնց, որոնք տառապած ու մահացած էին ժապավենին մէջ նկարագրուած պայմաններում տակ: Եւ այդ ժամանակ անդրադարձանք, թէ ժապավենը կենք տուած էր այն պատմություններ, որ կը միտէր պատմել, շունչ տուած էր հարիւր հազարաւոր այլ կեանքներու եւ երազներու: Աստիճանաբար կը ստանձնէինք բոլորովին աննախտեսելի նոր դեր մը՝ ժողովուրդին ձայնը մարմնաւորելու դերը, միշտ ջանալով ժապավենին պատմությունը պահել այնպէս, ինչպէս սկիզբէն նախատեսուած էր: Սակայն այժմ տարբեր հանդիսատեսներ, քննադատներ, փառատներու պատասխանատուներ, ժապավենի ցրուիչներ, տարբեր ձեւով կ'ընկալէին պատմությունը, տարբեր ձեւով կը դիտէին ժապավենի, տարբեր ձեւով կը լսէին «Արարատ»ի մասին մեր խօսքերը եւ տարբեր ձեւով կը հակազդէին «Արարատ»ի շուրջ ստեղծուած հետաքրքրություններ:

Երբ դժգոհություն յայտնեցի Աթոմին, թէ ճնշումը կը սաստկանար եւ միջնորդ չէինք գիտեր, թէ ժապավենը երկար ժամանակի վրայ ինչ անդրադարձներ պիտի ունենար իր ասպարէզին վրայ՝ իբրեւ արուեստագէտ, եւ ըսի, որ թերեւս պէտք էր սպասէր աւելի ուշ արժարժեւուն համար այս նիւթը եւ ստանձնելու այսքան հսկայական դեր մը, ան պատասխանեց:

«Չե՞ս տեսներ, հիմա է ժամանակը այս ժապավենին, շարժապատկերի շրջանակներու եւ ընդհանրապէս հանրություն մէջ վայելած ու շարունակական պատմություն: Եթէ ուզէ մէկը մեր պատմությունը պիտի լսէ, ժամանակը հիմա է, երբ գիտենք, թէ մարդիկ տրամադիր են մեզ լսելու: Չեմ գիտեր, թէ 70 տարեկանիս ով պիտի ճանչնայ կամ յիշէ զիս: Չեմ կրնար կորսնցնել այս առիթը»:

Գիտէի, թէ ճիշդ կ'ըսէր: Սակայն նաեւ այդ պահուն ինձի համար յստակ դարձաւ, թէ ոչ թէ իր ժապավենը քաղաքական էր, այլ իր միտումը, զայն պատրաստելու որոշումը եւ ժամանակը, ինչ որ զիս կը մօտեցնէ բուն ըսելիքին: Պէ՛տք է քաղաքականանալ: Պատասխանս վճռական ԱՅՈՒ է: Պէ՛տք է քաղաքագէտ դառնալ: Պայման չէ: Հարկ է գիտնալ, թէ ինչպէս մեր յարգությունները, իրագործումները, տաղանդները ու գիտությունը կարելի է դրամալուրձի վերածել: Դրամալուրձի մը, որ կրնայ ծառայել ի սպաս այն փոփոխություններուն, զորս կը ցանկանք տեսնել մեր շուրջ եւ մեզի համար: Նաեւ կը հաւատամ, որ այս մօտեցումին յարգություններ համար հարկ է, որ գոյություն ունենայ բան մը, գոր պիտի կոչէի «Ազգային Ծրագիր»:

Ազգային ծրագիր մը, որ պիտի ծառայէ իւրաքանչիւր սփիւռքահայուն եւ անկախ Հայաստանի իւրաքանչիւր քաղաքացիի: Ազգային ծրագիր մը, որ պիտի կտրէ ովկիանոսներն ու ցեղամաքամները եւ մեզ պիտի միացնէ ցանկուն:

Թեմա մը. ցանկություն հաւաքական քաղաքական գիտակցություններ, ազգային անվտանգություն, արդի ժամանակներու ինքնորոշման, կուռ ինքնարժեքներ, դաշնակցային ներքին դրություններ մը, որ պիտի համակարգէ մեր տարբերությունները, միաժամանակ զանոնք դրամալուրձի վերածելով: Աւելի՛ն. ազգային այս ծրագիրը պէտք է միացնէ մեր երկու ժողովուրդները. անոնք, որոնք կ'ապրին այսօրուան սահմաններով ընդդրուած մեր պայանական հողերուն վրայ՝ Հայաստանի Հանրապետություններ հսկայական տարածություններ մէջ եւ կը բնորոշուին այս բառին մարդկային իմաստով: Ազգային այս ծրագիրը ինձի համար տարբեր չէ տարժեքական հրաշալի գործէ մը, որուն մէջ տարբեր գործիքներ տարբեր ձայներ կը հնչեցնեն, սակայն ներդաշնակություն մը, զոր կը պարտադրէ յօրինողը, բայց նաեւ՝ խմբավարը եւ իւրաքանչիւր երաժիշտը, որ տուեալ պահուն կը մասնակցի նուազին: Ըսել կ'ուզեմ, թէ ամբերկահայր, բանաստեղծ, Ֆրանսաճայր, լիբանանահայր, ռուսահայր, Ղարաբաղի հայր եւ հայրենիքի մէջ ապրող հայր թերեւս տարբեր ձայներով կը խօսին, սակայն թերեւս հոն կը կայանայ մեր ուժը: Գրանքը փոփոխություն մը յառաջանելու մեր տարբերությունները, եթէ հետաքրքրություններ ցուցաբերենք մէկմէկու նկատմամբ, եթէ կամենանք բաժնեկցիլ, եթէ նախընտրենք կապ ունենալ այլոց հետ: Ազգային ծրագիր մը մտաւորականներուն, մեր քաղաքական հաստատություններուն, մեր հոգեւոր առաջնորդներուն եւ մեր տնտեսական կառույցներուն գործունէություններ: Կարճ խօսքով՝ ազգային ծրագիր մը մեզի պիտի տայ ապահովություն՝ իբրեւ ժողովուրդ, իբրեւ ազգ եւ իբրեւ ապրող պատմություն:

Ուսանելիքներն մէջ Ցեղասպանություն Յիշատակ

ՄԵԻ ՏՐԵՏԱԿԸ՝ ՈՒԻԹՆԻԻ ՄԷՋ

ԱՐՇԻԼ ԿՈՐԵԻԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՐՈՒՆԱԿԸ՝ ՆՈՒՐԻՅԱ ՄԱԹՈՍԵԱՆ ԱՐՈՒԵՍԻ ՈՒԹԵՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ԿՈՂՄԵ ԵՐՄԻՐՈՒՄԵ Ե ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԸԱՅ ԳԵՂԱՆԿԱՐԻՉԻՆ ԱՄԱՆԵԸ ԱՆՆԿԵՆԱԿԱՆԱՅՆՈՂ ԻՐ ԲԵՄԱԿԱՆ ՄԵՍԱՄՈՒԹԻՒՆԸ, ՈՐՈՒՆ ՄԱՍԻՆ ԿԸ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՐԱՐԿԱԾ Ե «ԱՉՂԱՅ»ԻՆ

Նուրիձա Մաթոսեան բրիտանահայ այն գրագիրուհին է, որ հոգեկան խոր գոհունակություններ կ'ապրի աշխարհին պարտադրած ըլլալով, որ Արշիլ Կորեիի ճանչնալ իբրեւ հայ գեղանկարիչ՝ իր հոգիով եւ արուեստով: Ան իր «Պլեք էյն յիւնըլ» կենսագրությունում նորնիսկ համոզած է, թէ Կորեիի հզոր արուեստին աղբիւրը անոր Հայկականությունն է:

Վերջին քանի մը տարիներուն լոյս տեսան Արշիլ Կորեիի նուիրուած երեք կենսագրություններ, սակայն Մաթոսեանի վերլուծություններն էին, որոնք արուեստի միջազգային շրջանակները մղեցին ընդունելու Կորեիի արուեստին մէջ հայկականություն գործօնը: Աւելի՛ն. Մաթոսեան 1998ին Արշիլ Կորեիի կենսագրությունը հրատարակելէն ի վեր, կենսագիրի իր կարծիքները միաձուլած է դերասանական իր շնորհներուն եւ պատմիչի մը իմաստությունները կը նկարագրէ Կորեիի հայկականությունը:

Մաթոսեանի բեմական մենախօսությունները Կորեիի փոթորկալից կեանքին պատմությունը կը վերարտադրեն մէկ ժամ քսան վայրկեանի մէջ, արտայայտապաշտ-վերացապաշտ պատասխաններու խորպայտակերի մը վրայ: Ան աւելի քան 60 անգամ Կորեիի հայկական անցեալը բանական դանացուցած է արեւմտեան եւ ամերիկեան շարք մը քաղաքներու մէջ, մինչեւ Լիբանան, Սուրիա եւ Հայաստան:

Վերջերս Արշիլ Կորեիի կնոջ սանուկին՝ Հայտնի Հերբերայի հրատարակած կենսագրություն գրախօսականին մէջ «Տը Նիւ Երբըրը» թերթը կը յիշատակէր նաեւ Մաթոսեանի անունը, իբրեւ այն կենսագիրը, որ «Կորեիի նման հայ է եւ այդ իրականությունները գինք մղած» է գրելու անոր կեանքին պատմությունը, նշելով, թէ Մաթոսեանի կենսագրությունը «կրակոտ է եւ յաճախ կը յուզէ»:

Ուրիշնի թանգարանը այս օրերուն Նիւ Երբը հրատարակէ Մաթոսեանը: Ան մէկն է Կորեիի երեք կենսագիրներէն, որոնք դասախօսություններ պիտի տան այս ամիս Կորեիի գծանկարներուն ներկայացման ցուցահանդէսի մը առիթով:


Մաթոսեանի «Սեւ հիշտակ» Արշիլ Կորեիի երկու կեանքերը՝ բեմական մենախօսություններ պիտի ներկայացուցի ցուցահանդէսին զուգահեռ, յառաջիկայ 25-ն 7 Դեկտեմբերին: Թանգարանին մէջ բեմական յարմարություններ հզոյունեան պատճառով՝ ելոյթները տեղի պիտի ունենան Պրոտուէլէյն դուրս՝ «Ռօ թիթերը»-ի մէջ:

«Ուրիշնի անդին» Արշիլ Կորեիի ոգեկոչելու համար՝ ներկայացումներն որմազքը կ'ըսէ:

տակի թանգարանը մեզի համար պիտի դառնայ մէկտեղումի վայր մը, որպէսզի շարունակենք յիշել մեր անցեալը, որպէսզի մտածենք մեր ներկայի մասին եւ հաւատանք մեր ապագային: Ազգային ծրագիր մը պիտի ապահովէ այս կարեւոր եւ արդար աշխատանքին անհրաժեշտ գորակցությունները, վստահություններ եւ խանդավառություններ: Ազգային ծրագիր մը յաւելեալ իմաստ պիտի տայ Ջօրջան Հիմնարկին նման ակադեմիական հաստատություններ մը, եւ պիտի օգնէ անոր իտեայները սերմանելու անոնց հոգիներուն մէջ, որոնք ամէնէն աւելի պիտի օգտուէին անոր ուսումնասիրություններէն եւ հրատարակություններէն: Ազգային ծրագիր մը ուժ պիտի հայթայթէ մեր արուեստագէտներուն եւ գրագէտներուն՝ տիեզերական նշանակություններ ձիրք պահովելով մեր մշակոյթին: Ազգային ծրագիր մը առիթ պիտի տայ, որ իւրաքանչիւր սփիւռքահայ իրապէս հասկնայ այսօր Հայաստանի դիմագրաւած մարտահրաւէրները՝ իբրեւ ընկերություններ եւ իբրեւ շոշափելի վայր: Ազգային ծրագիր մը վերջ պիտի դնէ Հայաստանի դուրս որդեգիր մանուկներ ուղարկելու: Ազգային ծրագիր մը մեզի պիտի օգնէ հասկնալու, թէ ո՞վ ենք այսօր, ինչպէս հասած ենք հոս, եւ ինչպէս կրնանք մեր տեղը ապահովել այս աշխարհին մէջ:

Պիտի ուզէի, որ բոլորս խոստում մը տանք այսօր, մտածելու տարբեր ձեւով, բայց միասին, այս պահուն, այստեղ եւ ամէն տեղ, ուր մենք մեզ հայ կը կոչենք, մենք մեզի եւ մեզի համար իրականացնելու այս, որովհետեւ մենք դերակատար ենք պատմություն մէջ եւ կ'ուզենք կերտել մեր սեփական պատմությունը:

Այս է, որ սորվեցայ «Արարատ»ի պատրաստությունները կրեւելու հետեւ, եւ իրապէս կը հաւատամ, որ իբրեւ մեր պայանական Արարատի գաւակներ՝ մեր ապագան կերտելու ճամբան «ազգային ծրագիր»ն է:



Ուրիշնի թանգարանին մէջ կայացող ցուցահանդէսին զուգահեռ՝ Նուրիձա Մաթոսեանի ներկայացումին որմազքը:

«Երիտասարդ եւ թշուառ Արշիլ Կորեի 1915ին Հայկական Ցեղասպանություններէն ետք հասաւ Նիւ Երբը քաղաք: Չորս կիներ՝ Կորեի մայրը, քորը, սիրուհին եւ կինը կը պատմեն անոր ծաղկումի մասին՝ իբրեւ արդի առաջնորդող գեղանկարիչ, ինչպէս նաեւ՝ անոր դառն անձնասպանությունները»:

Որմազքը կը նշէ նաեւ Աթոմ էկոլոգիանի այն վկայությունները, թէ «Արարատ» ժապավենին մէջ Անիի տիպարին ներշնչման աղբիւրը Մաթոսեանն է:

«Նուրիձա Մաթոսեան Արշիլ Կորեիի կենսագրություն վրայ հիմնուած բեմական իր մենախօսությունները կը պեղէ գեղանկարչին հայկական արմատները եւ այն հզոր կապերը, որոնք իրարու կ'աղբիւրեն մշակոյթը, քաղաքականությունները եւ անձնական պատմությունները: Պատկերներով եւ երաժշտություններ կ'ետադրուած չորս մենախօսություններով Մաթոսեան կը մարմնաւորէ Կորեիի կեանքին մէջ կեդրոնական դեր խաղած չորս կիները, - կը գրէ Ուրիշնի թանգարանի «Չորս հասնելու հանրային ծրագիր»ի պատասխանատունը՝ Ֆրէնք Սմայլիթը: Պլեք էյնը չորս կերպով կ'անդի կը կոչէ Կորեիի կենսագրությունը: Անիկ նաեւ լուսաբանի տակ կ'առնէ Կորեիի արուեստին բանալի մէկ գործօնը՝ անոր հայկական ժառանգությունը, Կորեիի կեանքին աւելի ուժեղանալու վերլուծումով: Թէ յիշ Մատեանի եւ Պարպիլիանի սրահներէն մեզի կը հասնի Կորեիի հզոր արուեստին եւ որդերգական կեանքին ցնցիչ պատմությունները»:

Պատրաստեց՝ Լ. ԿԻՒՈՅԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

Երբ արուեստը կը յաջողի կերպարամափոխել մարդկային մտածումները, զգացումներն ու կեանքը, կը դառնայ ոչ միայն ոգեղէն գործօն, այլ նաեւ քաղաքական հզոր ուժ: Երկու արուեստագիտուհիներ՝ այժմ արդէն շարժապատկերի բազմաթիւ մրցանակներու դափնեկիր Արսիմ Խանճեան եւ Արշիլ Կորեիի կենսագրութեան հեղինակ Նուրիձա Մաթոսեան լաւապէս կը գիտակցին արուեստի այս կախարդական ներգործութեան:

Մաթոսեան իր կեանքին առաջելութեան վերածած է ամերիկեան արդի արուեստի հիմնադիր գեղանկարչին հայկական արմատներուն ձանաչումը՝ օտար շրջանակներու մէջ: Ան գեղանկարչին անցեալն ու արուեստի ձանապարհը իրարու առնչող իր բեմական մենախօսություններով եւ ողբերգական տիտանական կերպարի մը պատմությունը հիւսելով՝ ամուղղակի կերպով Հայկական Ցեղասպանությունը կը յիշեցնէ իբրեւ անառարկելի ճշմարտութիւն: Ուրիշնի թանգարանը զայն հրաւիրած է իր



Խանճեան անցեալ Դոկտեմբերին Հարաւային Ափրիկէի մէջ արժանացաւ շարժապատկերի Տըրպան փառատօնին լաւագոյն կատարողութեան մրցանակին:


մենախօսությունը ներկայացնելու այս օրերուն Կորեիի նուիրուած ցուցահանդէսի մը առիթով: Նուրիձա Մաթոսեանի տիպարը ինքնին երեւակայական մարմնաւորումով մը բաժանեց հարիւրաւոր սրահներ, երբ «Արարատ» ժապավենին մէջ Արսիմ Խանճեան կատարեց Արշիլ Կորեիի կենսագիրի դերը: Անի բազմահազար հանդիսատեսներու դիմաց վերլուծեց Կորեիի «Արուեստագէտը եւ իր մայրը» գեղանկարը եւ անոր խորքին թաքնուած ցեղասպանութեան տառապանքը, ինչ որ ի վերջոյ առաջնորդած էր գեղանկարչին անձնասպանութեան:

Չեւով մը Մաթոսեան եւ Խանճեան նոյնացան: Հանդիսատեսին մտքին ու ներաշխարհին մէջ փոփոխություն մը յառաջացնող իրենց դերերով ամոք մականցեցին կենսագիրի եւ դերասանի իրենց կոչումը եւ բնագրային մղումով մը դարձան պատգամաբան:

Քանի 2002ի փառատօնին իր առաջին ներկայացումն էր ի վեր «Արարատ» ժապավենը կը շարունակէ մեր հանդիսատեսներ ներգրաւել (վերջերս՝ ճափոնի մէջ), Հայկական Ցեղասպանութեան միւթը պատմելով ցամաքամաս ցամաքամաս: Միջազգային մամուլը սպառիչ կերպով քննեց այս ժապավենին արժանիքներն ու թերությունները: Հայկական շրջանակներու մէջ ժապավենը ստեղծեց տարբեր հակազդեցութիւններ, սակայն անբարեբախտը ընկալուեցաւ իբրեւ իր տեսակին մէջ անմարդկային իրագործում մը, որ աշխարհին ուշադրութիւնը կը հրաւիրէր հայկական դատին վրայ: Ամիսներու ընթացքին «Արարատ»-ի բեմադրիչ Աթոմ Էկոլոգեան եւ Արսիմ Խանճեան ստիպուեցան երկար բացատրություններ տալ ժապավենին բնույթին եւ մարմնաստիճաններուն վերաբերեալ, յաճախ փորձելով բիրտեղացնել այն մտքերը, որոնք գիրենք առաջնորդած էին անոր ծնունդին: Այժմ, երբ ժապավենը արդէն քննադատական բազմաթիւ վերլուծումներու ենթարկուած է եւ երկար ձամբաներ կտրած, Արսիմ Խանճեան համարակալորէն կը նկարագրէ անոր պատրաստութեան ընթացքին ապրուած մտավախություններն ու խանդավառությունները, շեշտելու համար, թէ այս անհատը պարտաւոր է ի վերջոյ՝ «քաղաքականամալ»:

Նոյեմբերի սկիզբը Հայկական Համագումարին կողմէ ի պատիւ իրեն կանգնեցան «Արարատ»-ի փորձառութենէն մեկնելով՝ շեշտեցին «Ազգային ծրագիր» մշակելու անհրաժեշտութիւնը՝ զսպանակելու համար հայութեան ուժը: Չօրեան Հիմնարկը, որուն խորհուրդին անդամ է քանադակայ (Ռախկիս լիբանանահայ) դերասանուհին, հրապարակած է անոր դիպուկ խօսքերն արժանիքներ: Զովի սիւնակներով տեսնել թարգմանությունը:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ՖՈՒԹՊՈԼ. ԲԱՐԵԿԱՍԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ

ՖՐԱՆՍԱ ՖՈՒԹՊՈԼԻ ԴԱՍ ՏՈՒՎԻ ԳԵՐՄԱՆԻՈՅ...



Փիրևս, Հանրի եւ Թրեգեկե կը տօնեն...

Շաբաթ օր Գերմանիոյ մէջ տեղի ունեցած բարեկամական մրցումի մը ընթացքին Ֆրանսայի կապը երեք անպատասխան կոչեր ուղարկեց իր հիւրընկալին բերդէն ներս, արձանագրելով յաջորդական 13րդ յաղթանակը եւ անգամ մը եւս փաստելով, թէ կը մնայ Եւրոպայի հպօրագոյն կապներէն մէկը:

Գերարդիական 04 Շաբէի դաշտին մէջ տեղի ունեցած այս մրցումին Թիերի Հանրի բացաւ մրցումին հաշիւը, իսկ Թրեգեկե արձանագրեց յաջորդ երկու կոչերը շնորհիւ Հանրիի եւ Ջիտանի «նուէր» գնդակներուն:

Անգլիա 3-2 արդիւնքով պարտութիւն մը կրեց Դանիայէն: «Օլտ Թրեֆորտ»ի մէջ տեղի ունեցած մրցումին Տրոյ վայրկեանին Անգլիա բացաւ հաշիւը Ֆրանք Լամփարտի շնորհիւ: Խաղը «բաց» մնաց յաջորդող վայրկեաններուն մինչեւ առաջին կիսախաղի աւարտը (յասկապէս առաջին 30 վայրկեաններուն): Մրցումի մնացեալ ժամանակը եղաւ նուազ «վայրագ», թէեւ Բ. կիսախաղին երկու կոչներն ալ կորսնցուցին առիթներ, մինչեւ որ Թոմասոն արձանագրեց յաղթանակի կոչը:

Ստորեւ երէկուան բարեկամական մրցումներուն արդիւնքները.

| | |
|------------------------------|-----|
| Գերմանիա - Ֆրանսա | 0-3 |
| Աւստրալիա - Իրաք | 0-1 |
| Անգլիա - Դանիա | 2-3 |
| Ալպանիա - Էսթոնիա | 2-0 |
| Չեխիա - Քանադա | 5-1 |
| Լեհաստան - Սերպիա Մոնթենեկրօ | 4-3 |

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

●Սանուկ Չիրիբեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի, Սրբոց Զառասնից Մանկանց եկեղեցւոյ եղած են հետեւեալ նուիրատուութիւնները.

Վարդիվամ Պուրոնսուզեան 15,000 լ.ն., Յովհի Չիրիբեան 15,000 լ.ն., Յակոբ Չերքեզեան 10\$, Ժորժ Ապտ 15,000 լ.ն., Աւետիս Պողոսեան 10,000 լ.ն., Արուաշէ Տօնիկեան 20,000 լ.ն., Ժալիլա Գորգի 5,000 լ.ն., Կոստանդինեան ընտանիք 20,000 լ.ն., Յովսէպ Չիրիբեան 15,000 լ.ն.:

●Գեորգ Թաշճեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի, Սրբոց Զառասնից Մանկանց եկեղեցւոյ եղած են հետեւեալ նուիրատուութիւնները.

Ճորձ Զաղլասեան 10\$, Պարգեւ Պարսունեան 15,000 լ.ն, տիկին Մակի Աճոյեան եւ զաւակունք 20,000 լ.ն., տրեւ տիկին Հայկ Ոսկերիչեան 25,000 լ.ն., Սուլէյման Սուլէյման 20,000 լ.ն., Յակոբ Զազարեան 10,000 լ.ն., տրեւ տիկին Օճնիկ Օղլազեան 20,000 լ.ն., Օճնիկ Հաքիմեան եւ ընտանիք 15\$, Պաղտատեան ընտանիք 20\$, Սեւրոպեան ընտանիք 50,000 լ.ն., Հրայր Հալաճեան 20\$, Վազգէն Հալաճեան 20\$, տղաք. Նազարեք Արահամեան 30,000 լ.ն., Յակոբ Ոսկերիչեան 10,000 լ.ն., Զարլ Արախտ 50,000 լ.ն.:

●Անժէլ Սալորեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի, Սրբոց Զառասնից Մանկանց եկեղեցւոյ եղած են հետեւեալ նուիրատուութիւնները.

Ճուլֆայեան ընտանիք 15,000 լ.ն., տրեւ տիկին Յովհաննէս Պարտիզապեան 10,000 լ.ն., Բաֆֆի Պարտիզապեան 20,000 լ.ն., Վարդան Պարտիզապեան 20,000 լ.ն., Մաքրուհի Պասմաճեան 10,000 լ.ն., տղաք. Թովմաս Յակոբեան 20,000 լ.ն., Էլիաս Աթի 50,000 լ.ն., Գրիգոր Պետողեան 25,000 լ.ն., Վարդան Պարտիզապեան 20,000 լ.ն., Յակոբ Տէկիրմեճեան Կարօ Պեարեան 30,000 լ.ն., Յակոբ Պերճուհի Պարտասարապեան 15,000 լ.ն., տիկին Պերճուհի 50,000 լ.ն., Սիրոն Ապի Ռաշեան 20,000 լ.ն., տրեւ տիկին Տիգրան Սարգսի 50,000 լ.ն., Ժորժ Կատատա 10,000 լ.ն., Տիգրան Նարի 20\$, Նշան Պետոյեան 20,000 լ.ն., Զարեհ եւ Ստեփան Պաղտիկեան 20,000 լ.ն., Դեղարան Չամլեան 20,000 լ.ն., Ժորժ Աթի եւ Դեղարան Չամլեան 20,000 լ.ն., Ժորժ Աթի եւ ընտանիք 10,000 լ.ն., Ալոյա Գուլումճեան 20,000 լ.ն., Կիզն Աւետիսեան 10,000 լ.ն.:

ԵՒՐՕ-2004

ՀՈԼԱՆՏԱ ԵՒ ԹՈՒՐԵՒԱ ՊԱՐՏՈՒԵՑԱՆ

Եւրօ-2004ի արտօնանուծեան իրենց մասնակցութիւնը բերելու Հոլանտայի եւ Թուրքիոյ յոյսերը լուրջ հարուած մը ստացան Շաբաթ օր, երբ անոնք տեղի տուին իրենց հիւրընկալկազմերուն դիմաց: Ռուսիա իր հոգին վրայ ճերմակ հաւասարութիւն մը արձանագրեց Կալէսի դէմ, նոյնպէս նեղ կացութեան մատնելով ինքզինք: Սլովենիացիք 1-1 արդիւնքով վերադարձան ինտերնացիոնալ եւ միայն Սպանիան է որ արդարացուց ակնկալութիւնները եւ վախճանալի մէջ յաղթանակ մը կրցաւ կորզել Նորվեգիայէն:



Ռաուլ կը տօնէ...

ՍԿՈՎՏԻՍԱ - ՀՈԼԱՆՏԱ 1-0

Կլասթրի մէջ տեղի ունեցած այս մրցումին Սկովտիոյ կազմը անակնկալի բերաւ իր հիւրը՝ հօր Հոլանտան, շնորհիւ Մըքֆատընի կոչին, որ եկաւ 22րդ վայրկեանին:

ԼԱՅՈՒՆԱ - ԹՈՒՐԵՒԱ 1-0

Ռիկալի մէջ տեղի ունեցող այս մրցումին առաջ մարզիկները մէկ վայրկեան լուծութիւն պահեցին ի յիշատակ Իսթամպուլի պայթուածներու զոհերուն:

29րդ վայրկեանին Մարիս Վերփաքուսիս արձանագրեց մրցումի միակ կոչը: Թուրք ֆուտբոլիստներուն դժբախտութիւնները բազմապատկուեցան, երբ Էմրէ Աշիբ կարմիր քարտ ստացաւ եւ պիտի չկարենայ մասնակցիլ դարձի մրցումին: Այդ մրցումին բացակայութիւնը յանդէս եկաւ Այքէլը:

ԽՐՈՒԱԹԻԱ - ՍԼՈՎԵՆԻԱ 1-1

Չարզէպի մէջ տեղի ունեցած այս մրցումին Սլովենիա յաջողեցաւ հաւասարութիւն մը կորզել խրուաթներէն: Այս վերջինները բացին մրցումին հաշիւը 5րդ վայրկեանին, շնորհիւ Տասօ Փրշոյի կոչին, սակայն Սլովենիոյ հակադարձութիւնը ուղացաւ: 21րդ վայրկեանին էմրէ Սլոյճաք արդիւնքը հաւասարեցուց:



Նորվեգիոյ ուրախութիւնը կարճ տեւեց...

Սկովտիոյ հաւաքակազմի մարզիչ Պերթի Ֆոկցըրուստիքով խօսեցաւ իր կազմին խաղարկութեան մասին, յատկապէս առաջին կիսախաղին, ընդգծելով, որ 18 մին առաջ կազմի մարզիչի պաշտօնը ստանձնելէն ի վեր Սկովտիա նման գեղեցիկ խաղ չէր ցուցադրած:

«Արդիւնքը 1-0 է միայն, ոչ աւելի. հիմա պէտք է պատրաստուինք Չորեքշաբթի օրուան մրցումին», ըսաւ Ֆոկցը:

ԱՂՋԿԱՆՑ ՊԱՍՔԵԹՊՈԼ. Բ. ԴԱՍԱԿԱՐԳ

Հ. Մ. Ը. Մ. ՊԵՅՐՈՒԹ ՅԱՂԹԵՑ

Լիբանանի աղջկանց Բ. դասակարգի արտօնանուծութիւնը սկսաւ երէկ: Հ. Մ. Ը. Մ. Պէյրուս իր առաջին մրցումին 20-0 արդիւնքով յաղթական նկատուեցաւ երբ մրցակից խումբը Յրէր Պէյրուսէն, դաշտ չներկայացաւ:

Ստորեւ կը ներկայացնենք Հ. Մ. Ը. Մ. Պէյրուսի աղջկանց կազմին կատարելիք երթի մրցումներուն յայտարարութիւնը:

| ԹՈՒԱՎԱՆ | ԺԱՄ | ՄՐՑՈՒՄ | ԴԱՇՏ |
|------------|-------|-------------------------------------|----------|
| 23/11/2003 | 13:00 | Հ. Մ. Ը. Մ. Պէյրուս - Ֆիտա Սայտա | Շանվի |
| 30/11/2003 | 13:00 | Պու Սթարգ - Հ. Մ. Ը. Մ. Պէյրուս | Շանվի |
| 7/12/2003 | 11:00 | Հ. Մ. Ը. Մ. Պէյրուս - Շանվի | Անգրանիկ |
| 14/12/2003 | 13:00 | Ռիտաի Շիտ - Հ. Մ. Ը. Մ. Պէյրուս | Շանվի |
| 21/12/2003 | 11:00 | Սաթու Պէյրուս - Հ. Մ. Ը. Մ. Պէյրուս | Շանվի |
| 28/12/2003 | 13:00 | Հ. Մ. Ը. Մ. Պէյրուս - Պիպոս | Շանվի |


ԹԵՆԻՍ. ՄԱՍԹԵՐԸ

ԱԿԱՍԻ ԵՒ ՖԵՏԵՐԻՔ ԶԱՍԱՆ ԱՒԱՐՏԱԿԱՆԻՆ

«Մասթրը»ի մրցաշարի կիսաարտական մրցումներուն Անտրէ Ակասի 5-7, 6-0, 6-4 արդիւնքով պարտութեան մատնեց գերմանացի Ռայնըր Շուլցերը, իսկ գոլիցերիացի Ռոմէ Ֆետերէր 7-6 եւ 6-2 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց թիւ 1 դասուած էնտի Ռոտիքի վրայ, վերջ տալով «Մասթրը» շահելու անոր երազներուն:

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ԻՆՏԻՄԱԿ ԵՒ ԼԷՅՔԸՐԸ ԿԸ ՍՈՒՐԱՆ



Շաքիլ Օճիլ կը սաւառնի...

Էն. Պի. էյ. շաբաթավերջի մրցումներուն Ինտիմանա արձանագրեց երկու յաջողական յաղթանակներ, առաջինը՝ Սիէթլի, իսկ երկրորդը՝ Նիւ Եորքի խումբերուն դէմ: Այսպիսով, ան արձանագրած եղաւ 8 յաղթանակ եւ 2 պարտութիւն: Լէյքըրը, իր կարգին, պարտութեան մատնեց Տիթրոյիթը եւ իր յաղթանակներուն թիւը բարձրացուց 7-ի:

Ստորեւ շաբաթավերջի մրցումներուն արդիւնքները եւ դասաւորման պարզած պատկերը:

| ՇԱԲԱԹ | ՊԱՐԵՑ |
|-------------------------------------|---------|
| Պոսթըն - Քլիվլենտ | 91-82 |
| Նուրթա - Միլուոք | 85-77 |
| Մայեմի - Ուաշինգթոն | 105-101 |
| Ինտիանա - Սիէթլ | 101-78 |
| Նիւ Ճըրզի - Նիւ Եորք | 85-80 |
| Ֆիլադելֆիա - Սան Անթոնիօ | 100-96 |
| Հիւսթըն - Ֆեօնիքս | 90-85 |
| Սաքրամենթօ - Թորոնթօ | 94-64 |
| Լոս Անջելըս Լէյքըրը - Տիթրոյիթ | 94-89 |
| Լոս Անջելըս Քլիվլերը - Կոլտրն Սթըյթ | 104-98 |
| Տենիսի - Օրլանտօ | 106-101 |
| ԿԻՐԱԿԻ | |
| Ինտիանա - Նիւ Եորք | 95-94 |
| Քլիվլենտ - Ֆիլադելֆիա | 91-88 |
| Նիւ Օրլինզ - Փորթլենտ | 101-79 |
| Նիւ Ճըրզի - Աթլանթա | 100-85 |
| Սան Անթոնիօ - Ուաշինգթոն | 95-71 |
| Մեմֆիս - Տալաս | 108-101 |
| Տիթրոյիթ - Ֆեօնիքս | 100-91 |
| Միլուոքի - Նուրթա | 100-95 |
| Սիէթլ - Տիքսաս | 98-90 |
| Լոս Անջելըս Քլիվլերը - Օրլանտօ | 95-92 |

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԶԻՋԱՆ (ԱՍԻ ԱՆՏԵՍԱ ԳՕՏԻ)

| ԹԱՂԹ. | ՊԱՐՏ. |
|---------------------|-------|
| Պոսթըն Սեյթլ | 5 4 |
| Նիւ Ճըրզի Նեքս | 5 5 |
| Ֆիլադելֆիա Սիքսթըրթ | 5 5 |
| Ուաշինգթոն Ուիլքոքս | 3 6 |
| Մայեմի Հիթ | 2 7 |
| Նիւ Եորք Նիքս | 2 7 |
| Օրլանտօ Մեյթլ | 1 9 |

(ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՕՏԻ)

| | |
|---------------------|-----|
| Ինտիանա Փեյլերը | 8 2 |
| Նիւ Օրլինզ | 7 3 |
| Տիթրոյիթ Փիլադելֆիա | 6 4 |
| Միլուոքի | 5 4 |
| Թորոնթօ Ռեյթլերը | 4 5 |
| Տիքսաս Պուլ | 4 7 |
| Աթլանթա Հորնս | 3 7 |
| Քլիվլենտ Քաւալիրը | 3 7 |

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԶԻՋԱՆ (ՄԻՋՊԵՐՏԵԱՆ ԳՕՏԻ)

| | |
|------------------|-----|
| Հիւսթըն Ռոքեթս | 6 2 |
| Տալաս Մալթրիքս | 6 4 |
| Տենիսի Նակեթ | 5 4 |
| Մեմֆիս Կրիվիզ | 5 4 |
| Սան Անթոնիօ Սփրը | 6 5 |
| Միլուոքի Վուլվը | 5 5 |
| Նուրթա Ճեք | 5 5 |


(ԽԱՂԱՎԱԿԱՆ ԳՕՏԻ)

| | |
|------------------------|-----|
| Լոս Անջելըս Լէյքըրը | 7 2 |
| Սիէթլ Սուփըրսոնիթս | 6 2 |
| Լոս Անջելըս Քլիվլերը | 4 2 |
| Փորթլենտ Քլիվլերը | 5 4 |
| Մաքրամենթօ Քլիվլերը | 5 4 |
| Կոլտրն Սթըյթ Ուորիլերը | 4 4 |
| Ֆեօնիքս Սանգ | 3 6 |

ՊԱՐԵՍԻՆԵՆԻՍՏՐԱՅԷԼԵԱՆ ՏԱԳՆԱՊ

ՇԱՐՈՆ ԿԸ ՄԵՐԺԷ

«ԺԸՆԵՒԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆ»Ը



Պաղեստինեան ու իսրայէլեան հանրային կարծիքը կը հետեւի խաղաղութեան նոր ծրագրի մը առընչուող մանրամասնութիւններուն, հակառակ անոր որ պաշտօնապէս կողմերէն ոչ մէկը ճանաչում կու տայ անոր: «Ժընեւի նախաձեռնութիւն» անունան տակ ներկայացած ծրագիրը մշակուած է իսրայէլացի ու պաղեստինցի նախկին բարձրաստիճան պաշտօնատարներու կողմէ, որոնք կը շեշտեն, որ իրենց նախաձեռնութեան նպատակը խաղաղութեան ճամբու զարգացումն է, այլ՝ զայն ամբողջացնել:

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն բացարձակապէս մերժած է ժընեւի նախաձեռնութիւնը, պնդելով, որ քարտէսը խաղաղութեան միակ ծրագիրն է, որ պէտք է գործադրութեան դրուի:

Միւս կողմէ, պաղեստինցի մը սպաննուեցաւ երէկ կազախի հարաւային շրջանին մէջ: Իսրայէլեան ուժերը ներխուժած էին Ռաֆահ, ուր բախում ունեցած են: 55 տարեկան Պասսամ Ապու Լիպտա, որ ըստ իսրայէլեան աղբիւրներուն Եգիպտոսէն զէնք մաքսանենցող ցանց մը կը ղեկավարէր, սպաննուեցաւ:

Նապոլուի մէջ ալ, Շարաթ օր սպաննուած էր 14ամեայ Ահմէտ Հասանը, երբ իսրայէլացի զինուորներ կրակ բացին քարեր արձակող խումբ մը պատահինքուն վրայ: (ԱՅՓ)

ՔԻՐՈՍԻՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ԸՈՆԿՐԵՍԸ ՏԻԱԼՈՎԻ ԿՈՉ ԿՈՒՂՂԷ ԱՆԳԱՐԱՅԻ

Քիրոսիստանի ժողովուրդին Քոնկրէսը (Նախկին ՔԱԿը, ապա՝ ՔԱՏԵՔը) յայտնած է, թէ այլեւ թուրքիոյ մէջ ինքնավարութեան ի խնդիր չի պայքարիր, կ'ոչ ուղղելով Անգարայի, որ տիպոկի ձեռնարկէ: Սակայն Զուպէիր Այպար, որ Քոնկրէսին ղեկավարը նշանակուած է, յայտնած է, թէ խմբակը տակաւին պիտի չապագինուի:

Ան ըսած է, որ զէնքերը ինքնապաշտպանութեան համար պիտի մնան, մինչեւ այն ատեն, որ քրտական հարցին լուծում չգտնուի:

Ան նաեւ յոյս յայտնած է, որ Մ. Նահանգներ պիտի օժանդակեն նոր անուն ստացած քրտական խմբակին եւ թուրքիոյ միջեւ տիպոկի մը սկսման:

«Թուրքիոյ հետ պատերազմի վիճակի մէջ չենք գտնուիր, այլ՝ ինքնապաշտպանութեան վիճակի մէջ: Պատերազմին աւարտը պէտք է հռչակուի երկու կողմերէն», ըսած է ան:

Կուսակցութեան անունը եւ կառոյցը փոխելու որոշումը տրուած է Հիւսիսային Իրաքի մէջ Հոկտեմբեր 27էն Նոյեմբեր 6 տեղի ունեցած համագումարի մը, որուն մասնակցած են աշխարհի տարածքէն 360 պատերազմի:

Երեքշաբթի օր, ՔԱՏԵՔ Իրաքի մէջ յայտարարած էր, թէ պիտի կազմալուծուի քրտական աւելի ժողովրդավար կազմակերպութիւն մը Հիւսիսային համար:

Թուրքիա եւ Մ. Նահանգներ անկարելի չեն համարել կազմալուծուելու որոշումը: Ամերիկեան արտաքին գործոց նախարարութիւնը ըսած է, թէ ինքզինք այլ անունով վերակոչելու որոշումը ամերիկեան քաղաքականութեան համար որեւէ տարբերութիւն պիտի չընէ: (ԱՅՓ)

ԹՈՒՐԵՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՍԱՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

ԹՈՒՐԵ ԿԻՊՐԱՅԻԸ ՏՕՆԵՅԻՆ ԻՐԵՆՅ ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆ «ՊԵՏՈՒԹԵԱՆ» 20ՐԴ ՏԱՐԵԴԱՐՉԸ

Թուրք կիպրացիք Շարաթ օր տօնախմբած են իրենց անջատողական «պետութեան» 20րդ տարեդարձը:

Հիւսիսային Կիպրոս միօրեայ այցելութեան մը ընթացքին, Թուրքիոյ վարչապետ Ռեճեփ Թայիփ Էրտողան յայտարարած է, թէ «որեւէ գնով» լուծում մը պիտի մերժուի բաժնուած կղզիին համար:

Կարեւորը յանգիլ է մնայուն լուծումի մը, որ նոր ղէպքերու, լարուածութեանց դուռ չբանայ կղզիին վրայ, ըսած է ան:

Վարչապետը շեշտած է, թէ որեւէ լուծումի կողքին պէտք է միջազգային համայնքը ճանաչանայ թուրք կիպրական համայնքին քաղաքական իրավիճակը:

Դեկտեմբեր 14ին կղզիին հիւսիսային շրջանին մէջ պիտի կայանան երեսփոխանական ընտրութիւններ, որոնք բանայի դերակատարութիւն պիտի ունենան կղզիին ապագային որոշման մէջ: (ԱՅՓ)

ԴԱՇՆԱԿԻՑ ՈՒԺԵՐԸ 2004 ՅՈՒՆԻՍԸ ԻՐԱՔԵՆ ԸՆՈԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏ ՃՇՂԵՑԻՆ

Դաշնակից ճակատը, որուն հակակշիռին տակ կը գտնուի Իրաք, հրապարակեց քայլերը քաղաքական իշխանութեան փոխանցման եւ Յունիս 2004ը ճշդեց հետագման ժամկէտ:

Շարաթ օր ստորագրուած համաձայնութեան լոյսին տակ, դաշնակից ճակատի ժամանակաւոր իշխանութիւնը Իրաքի մէջ պիտի լուծուի մինչեւ 30 Յունիս 2004: Մինչ այդ, իրաքեան կառավարութիւնը մը պէտք է յառաջացած ըլլայ: Իրաքեան նոր իշխանութիւնը պէտք է նշանակուած ըլլայ փոխանցման հանգրուանի ազգային ժողովի մը (խորհրդարանի) կողմէ մինչեւ 31 Մայիս: Իշխող խորհուրդը իր կարգին լուծուած պիտի ըլլայ մինչեւ 30 Յունիս: Անկախ որեւէ դերակատարութիւն պիտի չունենայ փոխանցման հանգրուանի խորհրդարանին անդամները ընտրելու մէջ:

Իրաքի առաջին ընտրութիւնները տեղի պիտի ունենան 2005ի աւարտէն առաջ:

Իշխող խորհուրդի ընթացիկ նստաշրջանի նախագահ Ժայլ Թայպանի, որ ամերիկացի կառավարիչ Փոլ Պրեմերի հետ ստորագրած էր Շարաթ օրուան համաձայնութիւնը, յայտնեց, որ իշխող խորհուրդը փոխանցման հանգրուանի գծով օրէնք մը պիտի մշակէ մինչեւ Փետրուար 2004: Թայպանի ըսաւ, որ յիշեալ օրէնքը պիտի առնուի նաեւ սահմանադրութեան մշակման, որ պէտք է շուտով իրականանայ, որպէսզի կարելի ըլլայ անոր հիման վրայ կազմակերպել ընտրութիւնները:

Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ օրէնք իշխող խորհուրդին յայտարարած ծրագիրն ու ժամանակացոյցը, զայն նկատելով դրական քայլ մը ժողովրդավար Իրաքի մը ճամբուն վրայ: Ան աւելցուց, որ ամերիկացի ժողովուրդը յանձնառու կը մնայ Իրաքի բարգաւաճ ու ժողովրդավար ապագայի մը եւ թէ այդ ուղղութեամբ պատրաստ է անհրաժեշտ օժանդակութիւն տրամադրելու:

Միւս կողմէ, Պուշ դիտել տուաւ, որ Միացեալ Նահանգներ փախուտ պիտի չտան Իրաքէն, որ ամերիկացի պիտուորներ յարձակումներու կ'ենթարկուին գրեթէ առօրեայ դրութեամբ: Պուշ շեշտեց, որ Ռաշիդըն էլ անոր դաշնակիցները տեղի պիտի չտան այս ճնշումներուն դիմաց:

ՓԱՐՈՉԻ ՄԵՋ

Հ. Յ. Դ. ԵՐՐՈՍԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ «ԵՐՐՈՊԱՅԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՖՈՐՈՒՄ»ԻՆ

Փարիզի մէջ տեղի ունեցաւ «Երրոպայի Ընկերային Ֆորում»ի հաւաքը, որուն մասնակցեցան Հ. Յ. Դ. Երիտասարդականի ներկայացուցիչներ՝ Հայաստանէն, Ֆրանսայէն եւ այլ երկիրներէ: Հաւաքին կը մասնակցին 60 երկիրներէ շուրջ 50 հազար մասնակիցներ:

Նշեալ Ֆորումը ձեւաւորուած է 2001ին, Փորթո Ալեկրէի մէջ կրպակական շարք մը կազմակերպութիւններու նախաձեռնած «Համաշխարհային Ընկերային Ֆորում»ի հետեւողութեամբ:

Հաւաքին առաջին օրը Հ. Յ. Դ. Երիտասարդականի նախամները մասնակցած են Պալքաններու եւ Կովկասի մէջ առկայ խնդիրներուն նուիրումը քննարկելով, որ Թուրքիոյ կողմէ ընդունուած բարեփոխումներու որոշումները կը մնան միայն թուրքի վրայ:

ԼԻԲԱՆԱՆԱԿՅ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ...

Շարունակուած Յրդ էջէն

Բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ նաեւ ուսումնական խորհուրդի ատենապետ Յակոբ Լատոյեան, որ շնորհակալութեամբ արժեւորելէ տք որակաւորման դասընթացքին նկատմամբ ուսուցիչներուն ցուցաբերած գործակցութեան եւ պատրաստակամութեան ոգին, յաջողութիւն մաղթեց անոր իրականացման:

Որակաւորման դասընթացքին առաջին նիւթն էր «Աճման հոգեբանութիւնը»: Նիւթը ներկայացուեցաւ երկու բաժինով: Առաջին հերթին Արփի Պէրթիլեան ներկայացուց անձնական հոգեբանութեան ընդհանուր տեսութիւնները՝ կեդրոնանալով անոնց հոգեբանական-ընկերային, ճանաչողական, վարունակերպային եւ այլ ազդակներու վրայ: Երկրորդ բաժինով Ալիս Գալանճեան ներկայացուց դպրոցական երեխային տարիքային յատկանիշները՝ շեշտը դնելով անոնց ֆիզիքական, ճանաչողական-իմացական, զգացական եւ ընկերային երեւաններուն վրայ:

Դասընթացքին ներկայացած ուսուցիչները խմբային աշխատանքի ձեւով ունեցան աշխուժ մասնակցութիւն:


Նշենք, որ որակաւորման յաջորդ դասընթացքը տեղի պիտի ունենայ Շարաթ, 13 Դեկտեմբերին: Անոր նիւթն է «Ուսուցանելու եւ սորվելու սկզբունքներ»:

Մեծինարի մասնակիցները դիտել տուած են, որ Երրոպական Միութեան անդամակցութեան առաջ թուրքիոյ հարցերը պէտք է լուծուին, եւ ոչ թէ անկէ ետք:

Հաւաքին ընթացքին ընդհանրապէս կը քննարկուին մարդկութեան, աշխարհին, ժողովուրդներու եւ հասարականութիւններու առջեւ ծառայած ընկերային, քաղաքական, տնտեսական հիմնահարցերը:

ՖՐԱՆՍԱ

«ՔՈՒՆ ՄԵՅՐԻ 2» ԶՔՕՍԱՆԱԲՈՒՆ ՄԵՋ ԱՐԿԱԾ. 16 ԶՈՅ, 30 ՎԻՐԱԴՈՐ



Շիրաք եւ Ռաֆարէն արկածից վայրը

Ֆրանսայի Ատլանտեան ափի մեծագոյն նաւահանգիստներէն Սէն Նապէրի մէջ «հանգչող» «Քուին Մէյրի 2» պրօսանաւը, որ աշխարհի մեծագոյնն է, ապրեցաւ տխուր պահեր, երբ քարափէն նաւ միացող 10 մէթր բարձրութեամբ «ճամբան» փուլ եկաւ:

Նախագահ Ժաք Շիրաք եւ վարչապետ Ժան-Փիէր Ռաֆարէն այցելեցին արկածին վայրը եւ ցաւակցութիւն յայտնեցին աղէտին համար:

Ֆրանսայի մէջ հակասեմական արարքները կը շարունակուին: Հրէական երկրորդական վարժարան մը, որ յատուկ է միայն տղոց, հրոյ ճարակ դարձաւ: Փարիզեան շրջանի Կանյի քաղաքին մէջ գտնուող «Մեքայ Հաթրա» դպրոցը անձանօթներու կողմէ հրդեհի տրուած է:

Ներքին գործոց նախարար Նիքոլա Սարքուի եւ վարչապետ Ժան-Փիէր Ռաֆարէն դատաւարտած են արարքը եւ կը յուսան, որ խափանարարները անհետն արագ միջոցին կը յայտնաբերուին:

ԵԹԷ ԶԿԱՅԻՆ ԵՒ ԶԿԱՆ ԶԱՆԳՈՒԱԾԱՅԻՆ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶԷՆՔԵՐ... ԷՋ 4

ՊՈԼՍՈՅ ՄԵՋ ԵՐԿՈՒ ՍԻՆԱԿՈԿՆԵՐ ԹԻՐԱՆ ԴԱՐՉԱՆ...

Շարունակուած Ա. էջէն

Գրեթէ միաժամանակ տեղի ունեցած պայթումները անցնող քանի մը ամիսներուն հրէական թիրախներու դէմ շարք մը հարուածներու նորագոյններն են: Մայիսին Մարտի Քապալանքա քաղաքին մէջ անձնասպանական գործողութիւն մը 45 րոպէս յաւանք մը 45 րոպէս յաւանք մը 18 րոպէս յաւանք մը:

Պաշտօնատարներ նախ յայտնած էին, թէ պայթումները տեղի ունեցած են հաւանաբար պայթուցիկ նիւթերով լեցուց ինքնաշարժներու պատճառով, որոնք հեռուէն պայթեցուած են, սակայն ներքին գործոց նախարար Ապտիլլա Վիլ, ինչպէս նաեւ Իսրայէլի արտաքին գործոց նախարար Սիլվան Շալոմ, որ մեկնեցաւ Պոլիս, երէկ այցելած են երկու սինակոնները:

Շալոմ կոչ ուղղած է միջազգային համայնքին, որ միասնաբար աշխատին՝ ահաբեկչութեան դէմ պայքարելու համար:

Կիւլ նսեմացուցած է այն մտավախութիւնները, թէ յարձակումները վիժ պիտի բանան թուրքերու եւ Թուրքիոյ հրէայ համայնքին միջեւ: Թրքական «Ռատիքալ» թերթը հարցրած է, որ Իսրայէլ բազմիցս պտուղաբերութեամբ «Քայիտա»ի կողմէ հրէական կեդրոններու, որոնց կարգին՝ Նեվէ Շալոմ սինակոնները վրայ յարձակումներէ: Նշեալ սինակոնը մասամբ քանդուած է:

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԻ ԱՒԷ

Պոլսոյ յարձակումները «միաժամանակեան» դատաւարտուած են: Արարական Լիկայի ընդհանուր քարտուղար Անր Մուսա յայտնած է, թէ քաղաքայիններու դէմ վայրագութեան օգտագործուած անընդունելի է, սակայն ան աւելցուցած է, որ գործողութեանց պատասխանատուութիւնը մասամբ իսրայէլեան քաղաքականութեան պէտք է վերագրել, ամբաստանելով Իսրայէլը՝ միջազգային օրէնքը չարգելելու յանցանքով:

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսաէր Արաֆաթ, Սուրիա, Եգիպտոս, Մ. Նահանգներ, Իրան եւ Յունաստան դատաւարտած են գործողութիւնները: Յովհաննէս Պողոս Բ. պապը, դատաւարտելով Իրաքի եւ Թուրքիոյ մէջ արձանագրող սահաբեկչութիւնը, Իսրայէլը դատաւարտած է Այսր-յորդանանի մէջ պատի մը կառուցման գծով, յայտնելով, որ շրջանը «պատերու կարիքը չունի, այլ՝ կամուրջներու»: